Թերթում են էջերը, որոնք ամբարվել են համեստ թղթապանակներում՝ ամբողջացնելով մի մեծ պատմություն դարձած երևույթի, որը «Կիլիկիա» երևույթ է կոչվում, որ ոչ թե 34, այլ 20 տարեկան է: Ու թեք երբևէ գրվի «Կիլիկիա» առաջաստանավի պատմությունը, պատմություն, որ մեր նախնիների պատմական սխրանքներին տեր կանգնելու և դրանք շարունակելու հայ ժողովրդի կամքն ու պատրաստակամությունն է, ապա այս լռեցի կնոջ անունը անպայման իր պատվավոր տեղը կունենա նվիրյալների շարքում:

Հետաքրքրաշարժ է, թե ինչպես է այս հայրենասեր կինը հայթայթում մեր ժողովրդին փառք ու պատիվ բերող պատմական դեմքերին նվիրված փաստերը:

Չուլոյան - Աբուլյան ընտանիքին մտերիմ, բռնցքամարտի ճանաչված մարզիչ Վազգեն Բադալյանը ամեն անգամ արտասահ-

ման մեկնելուց առաջ, անպայման ստանում է տիկին Օֆելյայի պատվիրանները:

Թեհրանից նա իր հետ բերել է Սուրբ Սարգիս եկեղեցու բակում տեղադրված անվանի գորավար, հայապաշտպան, 19-րդ դարի վերջերի Պարսկաստանի զինված ուժերի նախարար Եթեմ Խահի (Դավիդյան) կիսանդրու լուսանկարը: Անպարտ գորավարին հայկական Գարիբալդիին նվիրված բաժինը այժմ սկսվում է հենց այդ լուսանկարից:

Իսկ Հունաստան կատարած ճանապարհորդությունից հետո մարզիչը տիկին Օֆելյային հանձնեց Օլիմպիա քաղաքի սպորտի ակադեմիայի տարածքում հիմնված անվանի քանդակագործ Լևոն Թոքմաչյանի կերտած օլիմպիական խաղերի կռվամարտի հաղթող (առաջին այլերկրացի) արքա Վարազդատ Արշակունու հուշաքարի պատկերը:

Թերթում են էջերը ու հասկանալի է դառնում, որ սրանց նվիրյալը մնացել է իր առաքելության բարձունքում, հայրենասիրական այն բարձրագույն բարոյական արժեքներով, որոնցով առաջնորդվելով ստեղծել է արխիվային նյութերի իսկական գրադարան:

Այդ գրադարանից օգտվում են շատերը: ... Եթեղ հրատարակչությամբ «Հայաստան» վերնագիրը կրող գիրքը իտալական Ռավեննա քաղաքից մեր հայրենակցուհի լրագրող, թարգմանչուհի Ալիս Թաշչյանի՝ հայրենիքում անցկացված օրերի վավերագիրն է:

Հռոմի և Ռավեննայի առաջատար թերթերի գրախոսներն ու թերթերում տեղ գտած մեկնաբանությունները վկայում են, որ այդ աշխատությունը արժեքավոր ձեռնարկ է իտալացի ընթերցողներին անմիջապես հաղորդակցելու աշխարհի հինավուրց ժողովուրդներից մեկի պատմական անցյալին, ներկային, նրա հարուստ մշակույթին: Ուշագրավն այն է, որ Ալիսի ուղեգրերի ողջ համադրվածքը կառուցված է նաև Օֆելյա Աբուլյանի հավաքած հարուստ նյութերի ուսումնասիրման, նրա զավակների՝ Նորայր և Կարինե Չուլոյանների հետ շփումների, զրույցների շնորհիվ:

Ներկայացնել Օֆելյա Աբուլյանի հայուհուն ու չանդրադառնալ նրա ընտանիքային և ստեղծագործական ունակություններին, նշանակում է թերի տեղ թողնել նրա գարմանահարաշ աշխարհում:

Ի սկզբանե Չուլոյանների ընտանիքում Ալեքսանդր Չուլոյան - գերդաստանի հոր ճիշտ և դրական մարդկային կերպարի շնորհիվ ամեն ինչ իր տեղում էր: Չէ որ առանց կայացած անուսնու, հոգատար և աշխատասեր հոր, ինչ - որ տեղ ինչ - որ բան թերի կլիներ: Չավակներն էլ ներքուստ հպարտանում են այդ համեստ մարդու՝ Սաշիկի գավակը լինելու համար:

Ձեռքի աշխատանքը նրանց ընտանիքում միշտ էլ հարկի է եղել: Մայրը՝ Սոֆյան, (ինը երեխա ծնած այդ կինը) հմուտ ժանյակագործ էր: Այնպես որ ստեղծագործելու համար հելուսագործության «հիմնական գործիքներին» հելուսին ու ասեղին Օֆելյան դեռ մանկուց է ընտելացել: Այստեղ էլ յոթանասունն անց կինը գտել է իր ինքնահաստատումը:

Հայրենասիրական ոգով ստեղծված գրելեմները զարդարում են Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի գազօջախները, Մայր Աթոռ Էջմիածնի կաթողիկոսարանի նստավայրը: Իսկ վարպետորեն ու նուրբ ճաշակով վերարտադրված «Խաչված արծիվի» գծագիրը կատարել է հայ վրիժառու Վարուժան Կարապետյանը, որը 17 երկար տարիներ անց է կացրել Ֆրանսիայի կալանավայրում:

Թյուր կարծիք կա, թե սուրբ մարդիկ եղել են միայն անցյալում, սակայն դա այդպես չէ:

Նրանք կան, ապրում են մեր կողքին, պարզապես ժամանակ է հարկավոր, որպեսզի մեր գիտակցությունը մաքրագրի մարդու՝ մեր ընկալումը:

Օֆելյա Աբուլյանի դեպքում մենք այդ գիտակցությունն ունենք վաղուց և, փառք աստծո, նա լիովին վայելում է իր շրջապատից անդրադարձող խորին սիրո և ակնածանքի պտուղները:

**Լևոն ԽԱՉՍՏՐՅԱՆ**  
**Նաիրա ԽԱՌԱՏՅԱՆ**

# ՀԱՅԵՐԸ ՎԵՐԱԴՂԱՌՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

## սակայն միայն այն ժամանակ, երբ նրանց արհիպուն են

**Հայաստանի տնտեսական աճի ուսույնների գույզընթաց, հայաստանցիները շարունակում են լքել հայրենիքը:**

Սա, իհարկե, մի քիչ տարօրինակ է, քանի որ բոլորս գիտենք, որ մեր օրերում Հայաստանում տնտեսությունն աճում է վազրային տեմպերով, տարեցտարի ավելանում է նոր բացվող աշխատատեղերի թիվը, հայրենական արտադրանքը նորանոր շուկաներ է նվաճում աշխարհում, փթթում է բիզնեսը, գաղափարային առևտուրը, բարձրանում է մարդկանց կենսամակարդակը, այնքան է բարձրանում, որ սրճարաններն ու զվարճանքի մյուս կենտրոնները ճկուն են այցելուների ծանրությունից: Ուրեմն՝ ի՞նչն է մարդկանց ստիպում այսպիսի ծաղկունքի ժամանակաշրջանում թողնել իրենց երկիրն ու բռնի կարգավիճակում ապրել եվրոպաներում: Սա մի հարց է, որի պատասխանը թերևս երբեք չեն ունենա նրանք, ում չափերով իրականում ձևված է հայաստանյան մեր օրերի բարեկեցությունը: Եվ իհարկե, ծիծաղելի կլինեք ենթադրել, թե Հայաստանի կառավարության կամ իշխանական մյուս օղակներում կա մեկը, ում անհանգստացնում է Հայաստանից ժողովրդի արտագաղթն ու դրա արդետալի հետևանքները երկրի համար: Ի տարբերություն Հայաստանի իշխանությունների, եվրոպական այն երկրների իշխանությունները, որտեղ հիմնականում ապօրինի և զարտուղի ճանապարհներով հաստատվում է իրենց անօրինական գոյությունն են պահպանում «Հայաստանի տնտեսական աճից» մագալուծ եղածները, խիստ անհանգստանում են իրենց երկրում այդ կոնտինգենտի գոյությամբ: Եվ եթե ՀՀ իշխանություններն առանձնապես իրենց ներդրումն չեն տալիս այդ երևույթը կանխող քայլեր ձեռնարկելու համար, ապա եվրոպական երկրների իշխանությունների դեպքում այդպես չէ. նրանք այդ հարցում ունեն կոնկրետ քաղաքականություն, որը և թելադրում են Հայաստանի նման երկրներին: Մասնավորապես, եվրոպական երկրները անօրինական միգրանտների հետընդունման (ռեադմիսիայի) մասին պայմանագրեր են կնքում, որի շրջանակներում և միգրացիայի աղբյուր հանդիսացող երկրները պարտավորվում են աշխատանքներ տանել իրենց քաղաքացիներին ետ վերադարձնելու ուղղությամբ: Ավելացնենք, որ ե՛ս անդամ երկրների հետ այս պայմանագրի ստորագրումը ե՛ս կառույցներին ինտեգրվելու պայմաններից մեկն է: Այսինքն, Հայաստանն, օրինակ, ե՛ս եվրոպական նոր հարևանություն քաղաքականության մեջ ներառվելու և ե՛ս հարևանի կարգավիճակ ստանալու համար պարտավոր եմ անօրինական միգրանտների ռեադմիսիայի պայմանագրեր կնքել ե՛ս անդամ այն երկրների հետ, որտեղ անօրինականորեն բնակվում են Հայաստանից փախած ՀՀ քաղաքացիները: Ինչպես տեղեկացանք ՀՀ ԱԳ նախարարությունից, Հայաստանի հետ ռեադմիսիայի մասին համաձայնագրերի կնքում սկսվել է 2003 թվականից: Մինչ այժմ ՀՀ-ն սնան համաձայնագրեր է կնքել Դանիայի, Շվեյցարիայի և Լիտվայի հետ, ընդ որում՝ երեքն էլ 2003-ի ընթացքում: Արտգործնախարարությունից հայտնում են նաև, որ տվյալ համաձայնագրերի կնքումը ենթադրում է երկարատև բանակցային գործընթաց, որը կարող է տևել մինչև 3-4 տարի: Ամբողջ խնդիրն այն է, որ հարցը բավական նուրբ է, և ասենք՝ համաձայնագրի մեջ կարող են հայտնվել ընդունող երկրի համար ոչ ձեռնտու կետեր, ինչի պատճառով էլ հենց մինչ համաձայնագրի կնքումը բանակցություններն այդքան երկար շարունակվում են: Ինչևէ, այս պահին Հայաստանը անօրինական միգրանտների ռեադմիսիայի մասին համաձայնագրի նախագծերի շուրջ բանակցում է միասնաձայն 11 երկրի հետ՝ Բելգիայի, Նիդերլանդների, Լյուքսեմբուրգի, Գերմանիայի, Նորվեգիայի, Չեխիայի, Շվեդիայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Բուլղարիայի և Ռուսաստանի: Թե ընդհանրապես այս երկրներից յուրաքանչյուրում այս պահին քանի հայ փախստական է թաքուն ապրում, ոչ ոք իրականում չի կարող ստույգ ասել, քանի որ նրանց հաշվառելու որևէ մեխանիզմ գոյություն չունի: Այս կամ այն երկրում անօրինական ճանապարհներով բնակվող ՀՀ քաղաքացիները ոչ միայն խուսափում են տվյալ երկրի իշխանությունների, այլև Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսությունների հետ ցանկացած շփումներից: Եվ այնուամենայնիվ, որոշակի գնահատականներ կան, թե հատկապես ո՞ր ուղղություններով են ՀՀ քաղաքացիները լքում Հայաստանը: Բնականաբար, ՀՀ միգրանտների անենա-

մեծ հոսք տեղի է ունենում դեպի Ռուսաստան, երկրորդ տեղում Արևմտյան Եվրոպայի երկրներն են, և երրորդ տեղում ԱՄՆ-ն: Իսկ Արևմտյան Եվրոպայի երկրների շարքում ամենամեծ թվով Հայաստանի միգրանտներ «հյուրընկալել» է Գերմանիան, որտեղ, որոշ գնահատականների համաձայն, հայ միգրանտների թիվը հասնում է 10 հազարի: Ինչևէ, նշենք, որ նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ երկրի և Հայաստանի միջև կնքված չէ ռեադմիսիայի մասին համաձայնագիր, սակայն այնտեղ «հայտնաբերվում է» անօրինական հիմունքներով բնակություն հաստատած ՀՀ քաղաքացի, նրան, միևնույնն է, տվյալ երկրից վտարում են Հայաստան: Պարզապես լինում են դեպքեր, երբ Հայաստանը կասկածի տակ է դնում տվյալ անձի ՀՀ քաղաքացիությունը, հրաժարվում է ընդունել և այլն: Այսինքն՝ համաձայնագրով հստակեցվում են քաղաքացիների հետընդունման մեխանիզմներն ու պայմանները, որոնցից մեկն էլ այն է, թե որ երկիրը պետք է հոգա տվյալ անձի ուղևորության ծախսերը՝ վտարող, թե ընդունող: Համաձայնագրի բացակայության պայմաններում մինչ այժմ Հայաստան վերադարձված քաղաքացիների վտարման ծախսերը հոգացել է վտարող պետությունը: Ինչպես հայտնում են ՀՀ ԱԳ նախարարությունից, 2002 թվականին վերոնշյալ բոլոր երկրներից միասին վերցված Հայաստան է վերադարձվել շուրջ 900 ՀՀ քաղաքացի, 2003 թվականին՝ 2700 հոգի, իսկ 2004 թվականին՝ 1700: Իսկ 2005 թվականի առաջին 11 ամիսների ընթացքում պահպանվել են 2004 թվականի միտումները: Այսպիսով, զարմանալի չէ, իհարկե, որ Հայաստանի իշխանություններն իրենց կողմից ոչինչ չեն ձեռնարկում երկրից հեռացած քաղաքացիներին ետ բերելու համար, իսկ արդյո՞ք քայլեր ձեռնարկվում են այլ երկրների կառավարությունների միջոցներով ՀՀ վերադարձող քաղաքացիներին «պահելու» համար: Ընդհանրապես այս հարցում մշակված է արդյոք որևէ պետական քաղաքականություն՝ ասենք այդ մարդկանց արտոնություններ տրամադրելու, աշխատանքով ապահովելու կամ այլ բաղադրիչներով: Իհարկե, երբ այս հարցն ուղղում էինք ՀՀ ԱԳ նախարարությանը, առանձնապես մեծ սպասելիքներ չունեինք, քանի որ նման հարցերի շուրջ հատուկ քաղաքականություններ մշակվում են նորմալ իշխանություն և կառավարման համակարգ ունեցող երկրներում: Եվ իհարկե, ԱԳ նախարարությունից ստացված պատասխանը բոլորովին անսպասելի չէր. «... Եկամուտ ստեղծող գործունեությանը զբաղվելու սահմանափակ հնարավորությունների պատճառով շատ հաճախ վերադարձված անձը ստիպված է լինում նորից մեկնելու արտասահման: Հայաստանի Հանրապետություն վերադարձվող անձինք օգտվում են Հայաստանի քաղաքացիների համար ՀՀ Սահմանադրության սահմանված բոլոր իրավունքներից և, ինչպես մյուսները, ունեն նաև պարտականություններ: Հատուկ արտոնություններ նրանց համար նախատեսված չեն»: Եվ կրկին՝ ետ վերադարձված ՀՀ քաղաքացիների հետագա ճակատագրով ավելի մտահոգված են այն երկրների իշխանությունները, որտեղից նրանք վտարվում են, քան Հայաստանի իշխանությունները: «Այլ բան է նպատակակետ երկրներ հանդիսացող պետությունների կողմից առաջարկվող օժանդակությունը: Օրինակ՝ ՀՀ վերադարձող քաղաքացիների ռեհիտեգրացմանն ուղղված ծրագրի իրականացման վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել Շվեյցարիայի հետ, ըստ որի այդ երկրից վերադարձող քաղաքացիների համար նախատեսվում է կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, նրանք ընտանիքի անցափառման անդամների համար՝ ուսումնական ծրագրեր, վերադարձող անձանց՝ սեփական գործ սկսելու համար՝ հատուկ օգնություն և այլն», - շարունակում է ՀՀ ԱԳ նախարարությունը: Ավելացնենք, որ վերջին շրջանում ՀՀ պաշտոնյաները հաճախ են հպարտանում այն փաստով, որ ՀՀ-ից հեռացած քաղաքացիները սկսել են հետ վերադառնալ Հայաստան: Նրանք, իհարկե, չեն մոռանում շեշտել, որ դա տեղի է ունենում տնտեսական երկնիչ աճերի հետևանքով Հայաստանում կենսամակարդակի բարձրացման շնորհիվ: Դժվար է, իհարկե, ե՛ս երկրների պահանջներն ու ցանկությունը անվանել ՀՀ-ում կենսամակարդակի բարձրացում:

# ՆԵՐԳԱՂԹՈՂ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԸ ՏԱՌԱՊՊՈՒՄ ԵՆ ԽՂՃՈՒԿ ԱՇԽԱՏԱՎԱՐՉԻՑ

## Նրանց հայացքն էլի ուղղվում է դեպի դուրս

38-ամյա Մարիամի ամուսինը երեք տարի Մոսկվայում աշխատելուց հետո այս տարվա գարնանը որոշեց վերադառնալ, որովհետև այլևս անկարող էր դիմանալ 3 դստեր ու կնոջ կարոտին: Սկզբում կարծես գոհ էր, մեքենա գնեց ու որպես առաքիչ աշխատանքի անցավ «Լուսակերտ» ընկերությունում: Բայց... ընդամենը 6 ամիս անց համոզվեց, որ նյութական դժվարություններն օր-օրի աճում են այստեղ 4 անգամ պակաս աշխատավարձ ստանալու պատճառով: Հայոց լեզվի ուսուցչուհի Մարիամը ստանում է 33 հազար դրամ աշխատավարձ, իսկ ավագ դուստրն այս տարի տնտեսագիտական համալսարանի ուսանողուհի դարձավ, պետք է հոգալ նաև նրա ուսման վարձը: Երկար մտածումներից հետո միակ ելքը գնած մեքենան վաճառելն ու նոյեմբերին նորից Մոսկվա մեկնելն էր: «Մեզ նման մարդիկ չեն կարող Հայաստանում նորմալ ապրելու մասին մտածել, երեխայի ուսման վարձ վճարել: Ինչքա՞ն պետք է դիմանանք մի կերպ, հազիվհազ ծայրը ծայրին հասցնելուն: Ինձ այստեղ պահողը 9-րդ դասարանի Գոհարիկն է, սպասում եմ դպրոցն ավարտի ու մեկնենք Մոսկվա: Այստեղ երեխաներիս համար ոչ մի հեռանկար չեմ տեսնում, համալսարանն ավարտելուց հետո էլ աշխատանքի խնդիրներ պիտի ունենամ ու չկարողանամ իրենց նվազագույն կարիքները բավարարել», ասում է Մարիամը:

Արտագաղթի մասին վերջին ժամանակներս մեզ անում ավելի քիչ է խոսվում, այս խնդիրն ավելի պակաս մտահոգիչ է համարվում, չնայած մեզ շրջապատող մարդկանցից հաճախ ենք լսում, որ մեկի եղբայրն է մեկնել Ռուսաստան ու վերադառնալու մտադրություն չունի, մյուսի բարեկամի ընտանիքն է տեղափոխվել Մոսկվա, երրորդինը՝ Կանադա, չորրորդինը՝ Իսպանիա և այլն:

Դրա փոխարեն քննարկվում են ներգաղթի համար պայմաններ ստեղծելու հարցերը, թեպետ ըստ վերջին ուսումնասիրությունների, Հայաստան վերադարձածների մոտ 60 տոկոսը կարճ ժամանակ անց մտածում է նույն երկիր մեկնելու մասին: Պատճառները բոլորիս են հայտնի՝ աշխատատեղի պակաս կամ ցածր աշխատավարձ: Սակայն պատահում են նաև արտասահմանում աշխատելու ծանրությունից հոգնածները:

Հմայիչ ու բարետես Լիանան մոր ու եղբոր հետ 11 տարի Վարշավայում ապրելուց հետո այս տարի վերադարձավ Հայաստան: Մեկնեցին դժոխային 1994-ին, ինքը 9-րդ դասարանում էր: «Մայրիկիս հետ աշխատում էինք առավոտյան ժամը 6-ից մինչև երեկոյան 18-ը, ամբողջ օրը դրսում առևտուր էինք անում, շատ դժվար էր, բացի այդ շատ էի կարոտում Հայաստանը ու որոշեցի վերադառնալ տատիկիս մոտ: Այստեղ, իհարկե, դժվարությունները շատ են, բայց ես չեմ զղջում վերադառնալուս համար, այլևս

ուժ չունեի այնտեղ դիմանալու: Հիմա աշխատում եմ հազուստի խանութում, բայց աշխատավարձս շատ քիչ է, այնտեղից 3 անգամ պակաս: Սովորելու մեծ ձգտում ունեմ, բայց հնարավորություն չունեմ ուսման վարձ վճարելու», ասում է Լիանան: Լեհաստանում նրա ծանոթներից շատերը, որ Հայաստան են գալիս գրանցման խնդիրների ճնշմամբ, չեն հարմարվում հայաստանյան կենսամակարդակին ու ձգտում են մեկ այլ երկիր մեկնել:

Ներգաղթողների խնդիրներն անցած տարվանից ուսումնասիրող շվեյցարական «Սիմերա» հասարակական կազմակերպությունը վերջերս «Կոնգրես» հյուրանոցում անցկացրեց «Ներգաղթի դեպի Հայաստան. ինչպես նպաստել հայրենիք վերադարձածների վերաինտեգրմանը» քննարկումը, որին հրավիրվել էին ներկայացուցիչներ կառավարությունից, միջազգային և հասարակական կազմակերպություններից: Նրանք խոսեցին արտասահմանում հայ միգրանտների կյանքի պայմանների, Հայաստան վերադարձածների վերաինտեգրման ու միայնակ կանանց մասին:

Հայաստանի տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության ներկայացուցիչ Համբարձում Աբրահամյանի ասելով, այլ երկրների սոցիալ-տնտեսական հարուստ համակարգից օգտվելու հեռանկարով և աշխատանք գտնելու հույսով 1990-ականներից մինչ օրս Հայաստանից հեռացել է մոտ 1 մլն քաղաքացի: Քանի որ նրանցից շատերն անօրինական միգրանտներ են, իսկ քաղաքական ապաստան ստանալու նրանց խնդրանքը մերժվել է, հետևաբար պետք է հեռանան այդ երկրներից: Ներկա պահին այդ խնդիրները լուծելու համար միգրացիոն գործակալությունը համագործակցում է եվրոպական մի շարք երկրների հետ:

«Սիմերա» ծրագրի ղեկավար Օդելի Պերենը ներկայացրեց 2005թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գյումրիում, Գավառում և Գորիսում անցկացված քննարկումների արդյունքները, որոնք բերեցին այն եզրահանգման, որ ի տարբերություն եվրոպական երկրների, Ռուսաստանից վերադարձողների համար վերաինտեգրման ծրագրեր չեն իրականացվում: Թերևս հենց այդ պատճառով հայաստանցիների գերակշիռ մասը նախընտրում է ապրել այնտեղ, անտեսելով ազգային խտրականության սուր դրսևորումները, իսկ ընտանիք ունեցող տղամարդիկ փորձում են իրենց կանանց ու երեխաներին ուղարկել Հայաստան: «Սիմերան» առաջարկում է միգրանտների համար ստեղծել տեղեկատվական ծառայություններ, սկսնակ գործարարներին տրամադրել առանց տոկոսադրույթի վարկեր:

Ռուզան ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ ԲԱՑԵՑԻՆ ՀԱՅԵՐԸ

Ստավրոպոլի երկրամասի Սուվորովսկայա ավանում կայացել է բռնցքամարտի մարզական համալիրի հանդիսավոր բացումը, որը կառուցել ու շահագործման է հանձնել տեղի «Ուրարտու» բռնցքամարտի ակումբի ղեկավար, Ռուսաստանի հայերի միության երկրամասային բաժանմունքի նախագահ Ռազմիկ Արամյանը: Մարզահամալիրի հանդիսավոր բացումից և օծումից հետո մրցախաղ է տեղի ունեցել «Ուրարտու» ակումբի և Հայաստանի օլիմպիական ռեզերվի հանրապետական ուսումնարանի թիմերի միջև: Մրցախաղն անց է կացվել ութ քաշային կարգերում և 13-ից մինչև 18 տարեկանների միջև: Այն նվիրված էր Դուրսուն Արամյանի՝ Սուվորովսկայա ստանիցայի հայ համայնքի հիմնադրի հիշատակին: Մրցախաղն ավարտվել է ոչ-ոքի՝ 4:4. հաղթել է բարեկամությունը: 2006 թվականին ստավրոպոլցի ուժեղագույն բռնցքամարտիկները կմասնակցեն համանման մրցախաղի, որը տեղի կունենա Հայաստանում:

## ԱՐՏԱՔՍՎԱԾՆԵՐԸ

«Ձվարթնոց» օդանավակայանում օդային սահմանը հսկող ռուսական սահմանապահ զորքի հաշվառման տվյալներով, այս տարվա դեկտեմբերի 1-ի դրությամբ, այլ երկրներից Հայաստան է արտաքսվել 418 ՀՀ քաղաքացի, այդ թվում Գերմանիայից՝ 59, Թուրքիայից՝ 44, Հոլանդիայից՝ 39, Հունաստանից՝ 37, Չեխիայից՝ 73 հոգի: Սրանք այն երկրներն են, որտեղից արտաքսված հայերի թիվն ավելի մեծ է: Եգիպտոսից, Կանադայից, Իտալիայից, Կոլումբիայից արտաքսվել է մեկական մարդ, Իսպանիայից, Շվեյցարիայից՝ երկուական, ԱՄՆ-ից՝ հինգ մարդ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

# ՄԵՐՈՆՔ ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ



Ցավով ստիպված ենք արձանագրել, որ արդար ու անարդար ծանապարհով «եվրոպական դրախտ» ընկած մեր հայրենակիցներից շատ շատերը գոյատևում են այնտեղ տարրական գողության հաշվին: Որքան էլ անոթ է դա գիտակցել, բայց գողությունը նրանք վերածել են մասնագիտության, ապրուստի միջոցի: Եվ նրանցով է աշխարհը դատում Հայաստանի ու հայերի մասին: Ինչպես պատմում են մեր արքայուհիները, Գերմանիայում գողությանը զբաղվող նախկին հայաստանցիները աչքի են ընկնում բացառիկ հնարամտությամբ: Օրինակ, նրանք ապրանքը մագնիսական պիտակներով հանդերձ խցկում են ներսից մետաղական փայլաթիթեղով պատված պայուսակների մեջ: Ասում են, որ այդ պայուսակները, մեջը թաքցրած գողացված ապրանքով, անտեսանելի են խանութի մուտքի մոտ տեղադրված էլեկտրոնային ազդանշանի համար և աննկատ թռչում են, ինչպես «Ստելլա» ինքնաթիռները ռադարների մոտով: Բայց այստեղ էլ վտանգավոր է չափից դուրս ազահություն դրսևորելը: Ամռանը Մագդեբուրգ քաղաքի առևտրական կենտրոնում բռնեցին հայաստանցի երկու գողի (ըստ որում՝ կանանց) գողացված ապրանքով լի սայլակներով: Մեր հայրենակցուհիները պարզապես

սրահից սրահ էին անցնում, իրենց «Ստելլա» պայուսակների մեջ դարսելով դուր եկած իրերը: Գերմանացի ոստիկաններին ապշեցրեց նույնիսկ ոչ այնքան գողերի լկտիությունը, որոնք հարկ չէին համարել ժամանակ վատնել ապրանքի միջանցիկ բեռնաթափման վրա, այլ սեփական քրտինքով վաստակածին հրաժեշտ չտալու նրանց համառ ցանկությունը: Երբ ոստիկանական ավտոմեքենան առևտրական կենտրոնի ելքի մոտ ուղղվեց դեպի երկու սայլակավորները, սրանք ամեն ինչ թողնել-փախչելու փոխարեն, ճողոպրեցին ոստիկանությունից՝ իրենց առջևից հրելով սրտներին թանկ սայլակները: Ավաղ, ոստիկանական մեքենան, ինչպես պարզվեց, ավելի մեծ արագություն է հավաքում, քան կնոջ, թեկուզև հայուհու կողմից հրվող սայլակը: Դորտմունդում ժամանակին ձերբակալեցին հայաստանցի չորս փախստականների, որոնք Գերմանիայում քաղաքական ապաստան էին փնտրում, քանզի հայրենիքում հետապնդվում էին «տոտալիտար ռեժիմի» կողմից: Քաղմարտիկների վարձած համեստ բնակարանում ոստիկանները հայտնաբերեցին առաքման պատրաստ ապրանքի այնպիսի քանակություն, որ կարող էր երջանկացնել ողջ Արարատի մարզի բնակչությանը: Այնտեղ կային ավտոմեքենաներից պոկոտած մագնիսալուրեր, մագների և սափրվելու քսուքների խմբաքանակներ, խաղաթղթեր, շամպուններ, մանկական կոշիկ, կանացի ներքնաշորեր, ամանեղեն, կերակուրը շրջելու խոհարարական թիակներ, ստերիլոմայնագրիչներ, դյուրակիր ռադիոընդունիչներ, խոհանոցային դանակների կոմպլեկտներ և այլն: Ասենք, ավելի հեշտ է նշել, թե ինչ չկար համերաշխ քառյակի կացարանում, քան թվարկել գողացված ողջ նոմենկլատուրան: Ի դեպ, ոստիկանները այն ժամանակ

հանգումընք էին հայտնել, որ իրենք հայերին փրկեցին խեղդամահ լինելուց. և մի քիչ և այդ ողջ կույտը կգահավիժեր Հայաստանում տոտալիտար ռեժիմի դեմ մարտնչողների վրա: Հետաքրքիր է, որ ողջ այդ առատությունը գողացվել էր ռեկորդային կարճ ժամկետում: Հայաստանի երեք քաղաքացիները Գերմանիա էին եկել ձերբակալությունից ընդամենը մեկուկես ամիս առաջ, և միայն մեկ վետերան էր, որ խանութներում իր հարվածային աշխատանքով զբաղված էր չորս ամիս: Անշուշտ, տխուր վերջաբանով մեր պատմությունները հետ չեն պահի նրանց, ովքեր արդեն որոշել են մեկնել եվրոպական հյուրախաղերի, ուստի ևս մեկ անգամ խնդրում ենք. հետևեք մանրուքներին: Հենց դրանց վրա են «քաշվում» արտասահմանում: Հիշո՞ւմ եք, թե ինչպես ժամանակին մերկացրին սովետական լրտեսին: Նա խմեց օղին, իսկ հետո թևքից հոտ քաշեց: Այնպես որ, խնդրում ենք. առանց թևքերի: Բացի այդ, հեղինակը արդու հույս է տածում, որ տեղական առանձնահատկություններից և սովորություններից իմնովին գլուխ հանել փորձող մարդիկ գարգանում են և նույնիսկ հոգեպես զեղեցկանում: Եվ ուրեմն կա հավանականություն, որ ինչ-որ մեկը Գերմանիայի խանութներում գողության փոխարեն կգերադասի ավելի արժանապատիվ զբաղմունք: Օրինակ՝ որպես անցումային փուլ, գողից մարդու վերածվելու ճանապարհին, կարող է ծառայել մուրացկանությունը: Ողորմություն եվրոպայում տալիս են լավ և շատ: Դե, իսկ ծայրահեղ դեպքում, եթե ոչ մի կերպ չեք դիմանում, կարելի է և գողանալ: Միայն թե քիչ-քիչ, ինչպես ասում են՝ հոգու համար:

Տիգրան ՎԱԿՅԱՆ

## ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄՈՒՍԱՍՏԱՆԻՑ

## ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ

### ԱՐԴԵՆ 6,5 ՄԵԼԻԱՐԴ Է

Հայաստան 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ներմուծվել է 14 հազ. 786 մարդատար ավտոմեքենա, որից 5714-ը՝ Ռուսաստանից: Համաձայն մաքսային պետական կոմիտեի տվյալների, նախորդ տարի Հայաստան էր ներմուծվել 12 հազ. 87 ավտոմեքենա, որից 5685-ը՝ Ռուսաստանից: Ընթացիկ տարի այլ երկրներից ներկրված 9072 ավտոմեքենաների գերակշռ մասը բերվել է հիմնականում Վրաստանից և ԵՄ անդամ երկրներից՝ մասնավորապես Գերմանիայից:

ՄԱԿ-ի տվյալներ վկայակոչելով՝ Ֆրանսիայի ժողովրդավարական հետազոտությունների ազգային ինստիտուտը տեղեկացնում է, որ մոլորակի բնակչության թիվն առաջիկա երկուշաբթի պաշտոնապես հատելու է 6,5 միլիարդի սահմանագիծը:

### Հազեցած պահարան

Ռուսաստանցի բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում անցկացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՌԴ նախագահի աշխատակազմի, կառավարության և խորհրդարանի անդամները, ինչպես նաև հայտնի քաղաքական գործիչները բավական թանկարժեք հագուստ են կրում: Միջին հաշվով նրանցից յուրաքանչյուրն ունի առնվազն 5 ամենօրյա կոստյում (8500\$), երկուսական ամառային, ձմեռային և երեկոյան կոստյում (10200\$), 40 վերնաշապիկ (8000\$), 50 փողկապ (10000\$), 3 վերարկու (15000\$) և 9 զույգ կոշիկ (2000\$):

Մասնագետներն ընդգծում են, որ այդ իրադարձության համար սահմանված օրը պայմանական է, քանզի երկրագնդի բնակչությանն առնչվող բոլոր հաշվարկները որոշակի անճշտություն են պարունակում:

Ուստի այսօր անհնար է ստուգապես պնդել, թե մոլորակի բնակչության թիվը որ օրն է հասել կամ հասնելու 6,5 միլիարդի: Ինստիտուտի փորձագետները հիշեցնում են դեռ 50 տարի առաջ ժողովրդագիրների արած այն կանխատեսումը, որ մոլորակի բնակչությունը 6,5 միլիարդի սահմանագիծը հատելու է 2005 թ.: Այն ժամանակ նախ՝ կանխատեսվել էր, որ 2050 թ. Երկրի վրա 15 մլրդ մարդ է ապրելու: Բայց այսօր շատերը վիճարկում են այդ կանխատեսումը: Ֆրանսիայի ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտի մասնագետները կարծում են, որ 2050 թ. աշխարհի բնակչության թիվը կհասնի 8-9 միլիարդի:

# ՆԵՐԳԱՂԹՅԱԼ ՆԵՐՆ ԱՄԵՆ ՄԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺՆ ԵՆ

«Ռոսբալթ» գործակալության հարցազրույցը Արա Աբրահամյանի հետ

Ռուսաստանի հայերի միության նախագահ, Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը դարձել է Ռուսական կենսագրական ինստիտուտի «Տարվա մարդ-2005» մրցանակի դափնեկիր: Դրանով իսկ մշվել է նրա եռանդուն մասնակցությունը նավթի մաքսամենագության մեղադրանքով Նիգերիայի բանտում հայտնված ռուսաստանցի նավաստիների ազատագրմանը: Դեկտեմբերի 7-ին Մոսկվայի Քրիստոս Փրկչի տաճարում ելույթ ունենալով մրցանակի հանձնման արարողության ժամանակ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպան Արա Աբրահամյանը ներկաներին խոստացավ «ամեն ինչ անել, որպեսզի ռուսաստանցի նավաստիները Նոր տարում վերադառնան իրենց ընտանիքներ»: Այդ իրադարձությունից մի քանի օր առաջ նա ծավալուն հարցազրույց էր տվել «Ռոսբալթ» գործակալությանը:

**- Պրն Աբրահամյան, ռուս նավաստիներին օգնելիս Ձեր դրսևորած ակտիվությունը ռուսաստանյան դիվանագիտության թերմանակազմում հետևանքն էր: Ներկայումս փոխվում է արդյոք Ռուսաստանի վերաբերմունքը ուրիշ երկրներում օրհասական վիճակում հայտնվող իր քաղաքացիների հանդեպ:**

- Ռուսաստանի դիվանագիտությունը ևս այսօր վերականգնվում է խորհրդային պետության փլուզումից հետո: Եղավ մի ժամանակահատված, երբ ԱԳՆ-ից հեռանում էին աշխատակիցները, ոչ ոք չէր ուզում դիվանագիտական կորպուսում ծառայել խղճով աշխատավարձերի պատճառով: Այնտեղ կադրային սով էր, և դիվանագետները գոյատևում էին այնպես, ինչպես Ռուսաստանի ամբողջ բնակչությունը: Նրանք հեռու էին ազգային շահերի ակտիվ պաշտպանությունից, մանավանդ որ պետությունը շատ թույլ և ոչ այնքան հասկանալի կերպով էր ձևակերպում այդ ազգային շահը:

Ներկա պայմաններում ռուսաստանյան դիվանագիտությունը սկսել է գործել առավել ակտիվորեն: Պետությունը վերականգնել է սուբյեկտի իր կարգավիճակը: Բայց այնպիսի հարցեր, ինչպիսիք են Նիգերիայում ռուս նավաստիների կամ Հասարակածային Գվինեայում հայ օդաչուների ճակատագիրը, չեն լուծվում զուտ դիվանագիտական միջոցներով: Այստեղ պահանջվում է այլ ուժերի, կառույցների, հաստատությունների և մարդկանց մասնակցություն, որոնք դուրս են պաշտոնական դիվանագիտությունից: Միայն իմ միջազգային կապերը և շփումները շատ օգտակար եղան Հասարակածային Գվինեայից հայ օդաչուների ազատագրման, իսկ հիմա էլ ռուս նավաստիների ճակատագրին առնչվող բարդ խնդիրը լուծելու համար:

Համարի է պատահում, որ Արևմուտքում ևս այդ հարցերով զբաղվում են ոչ թե պետկառույցների պաշտոնական անձինք, այլ երկրի ղեկավարության կամ նույն արտգործնախարարության խնդրանքով հատկապես նշանակված մարդիկ, որոնք վստահելի են, հարգված, կարող են իրենց թույլ տալ բանակցել ավելի լայն ձևաչափով, քան դիվանագետները: Միայն ինչու են այդ գործերում ներգրավվեցի հայ օդաչուների դեպքում Հայաստանի իշխանությունների և ռուս նավաստիների դեպքում Ռուսաստանի իշխանությունների համաձայնությամբ: Կարծում եմ, Ռուսաստանն այսուհետև էլ մեծ հոգածություն և ուշադրություն կդրսևորի փորձանքի մեջ ընկած իր քաղաքացիների հանդեպ:

**- Ձեր կարծիքով, ի՞նչ է հարկավոր անել, որպեսզի Ռուսաստանի քաղաքացիներն ապագայում չհայտնվեն նման իրավիճակներում և զգան իրենց պետության պաշտպանությունը:**

- Հի կարելի բացառել մեր նավաստիների հայտնվելն այնպիսի իրավիճակում, երբ նրանց կմեղադրեն ձկնագողության մեջ: Մենք մշտապես ակնատես ենք լինում նման դեպքերի, օրինակ Ճապոնացիների հետ, որոնք հայտնվում են Ռուսաստանի տարածքային ջրերում: Վերջերս նման իրավիճակում հայտնվեցին մեր ձկնորսները նորվեգացիների հետ վիճելի գոտում: Այդ իրավիճակները միշտ կլինեն, և հարցը դրանց կանխումը չէ: Հարցն այն է, որ քաղաքացիներն ինչպիսի վիճակում էլ հայտնվեն, նույնիսկ այս կամ այն պետության օրենքները ծովում, ցամաքում կամ օդում խախտելու դեպքում վստահ լինեն, որ իրենց պետությունը մշտապես կպաշտպանի իրենց շահերը: Սա բնավ չի նշանակում, թե այդ մարդիկ չեն պատժվի կատարած հանցագործությունների կամ զանցանքների համար: Բայց նրանք չպետք է

թողնվեն բախտի քմահաճույքին, և նրանց կրելիք պատասխանատվությունը պետք է համապատասխանի իրենց կատարածին: Միայն ինչու շատ պետություններ սովորաբար ձգտում են, որպեսզի ուրիշ երկրում օրենքը խախտած իրենց քաղաքացիները պատիժ կրեն հայրենիքում, ինչն, իհարկե, պատիժ է, բայց կրկնակի չի խորանում օտար լեզվամշակութային միջավայրում գտնվելու հետևանքով:

**- Ֆրանսիայի դրամատիկ իրադարձությունների լույսով ներգաղթյալների ինտեգրման հարցերն առանձնահատուկ կարևորություն են ստանում նաև Ռուսաստանում: ՌԴ-ում ապրող հայերի մեջ քիչ չեն այնպիսիք, որոնք այստեղ հայտնվել են վերջին տարիներին փնտրելով աշխատանք և կյանություն: Ձեր կարծիքով, այդ մարդիկ ինչպե՞ս են ինտեգրվում ռուսաստանյան կյանքին:**

- Իրոք, խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի տնտեսական ոլորտում իրավիճակի վատթարացման, բազմաթիվ ձեռնարկությունների փակման պատճառով հարյուր հազարավոր հայեր հեռացան հանրապետությունից: Նրանցից շատերը հաստատվեցին Ռուսաստանում՝ Պետերբուրգից մինչև Վլադիվոստոկ, Արխանգելսկից և Մուրմանսկից մինչև Սոչի: ամենուրեք հայտնվեցին հայերի նոր խմբեր: Այդ վայրերում գտնվող հայկական հին համայնքները նրանց օգնում են հարմարվելու լեզվական և մշակութային նոր միջավայրին՝ հաճախ ստեղծելով միանգամայն նոր համայնքներ: Նրանք զբաղվում են մանր ու միջակ գործարարությամբ, փորձում ստեղծել նոր աշխատատեղեր, որպեսզի իրենք աշխատեն և ապա սեփական գործն ընդլայնելով ներգրավվեն ուրիշներին: Պետք է ասել, որ գործընթացը բավական հիվանդագին է: Բայց հայկական համայնքն ունի Ռուսաստանի մշակութային, լեզվական և տնտեսական միջավայրին ինտեգրվելու բազմադարյա փորձ, ուստի այստեղ մենք չենք տեսնում շատ լուրջ խնդիրներ:

**- Ներկայումս ովքե՞ր են կազմում Ռուսաստանի հայերի միության ակտիվը և կոնկրետ ո՞րն է Ձեր կազմակերպության հիմնական գործունեությունը:**

- Հայերի միության ակտիվը կազմում են 240 քաղաքներում Ռուսաստանի Դաշնության 70-ից ավելի սուբյեկտների հայկական համայնքները: Այդ բոլոր համայնքներում այսօր գլխավոր ուժը Հայաստանից նոր եկած մարդիկ են, որոնք լի են վճռակամությամբ տնտեսական ու սոցիալական հաջողության հասնելու նոր բնակավայրում, նոր միջավայրում: Նրանք շատ են աշխատում, շատ ջանքեր թափում: Ինչպես հայտնի է ամերիկյան պատմությունից, ներգաղթյալները միշտ աշխատում են ավելի շատ և ստանում ավելի քիչ: Նրանք համաձայնում են ամեն տեսակ աշխատանքի հանդիսանալով ամեն մի հասարակության շարժիչ ուժը: Համենայն դեպս, բազմաթիվ սերունդների կյանքի ընթացքում այդպես է եղել ԱՄՆ-ում: Այսօր մենք նույնը նկատում ենք Ռուսաստանի օրինակով: Ներգաղթյալները զարգացնում են այն երկրամասերն ու մարզերը, տնտեսության այն ճյուղերը, որոնք տեղաբնակները երբեք չէին կարողանա գարգացնել:

Ասենք, խորհրդային ժամանակներում էլ հսկայական թվով հայեր դասվում էին այսպես կոչված «խոպանջիներին» թվին: Նրանք մեկտեսնում էին Միքիլ, Ղազախստան, Ուկրաինա, ոչ սևահողային գոտի, կապալներ վերցնում, կառուցում գոմեր, ճանապարհներ, մշակույթի տներ, իրացնում վիթխարի միջոցներ, բանի որ տեղերում աշխատուժը չէր բավականացնում: Եվ տեղական իշխանությունները մեծ հաճությամբ էին աշխատում այդ մարդկանց հետ, որոնք գալիս էին հենց աշխատելու և ոչ թե գովանալու:

Իհարկե, որոշակի բարդություն կա մի քանի սերունդների կյանքի ընթացքում Ռուսաստանում արդեն ինտեգրված հայերի և նորեկների միջև: Այսպես կոչված տեղացի հայերի զգալի մասը բավական լավ է ինտեգրված ռուսաստանյան հասարակությանը: Նրանք հսկայական հաջողությունների են հասել գիտության ասպարեզում, կրթության, գործարարության, արդյունաբերության ոլորտներում: Մոսկվայում և երկրի տարբեր շրջանների մյուս խոշոր քաղաքներում նրանք աչքի ընկնող դիրքեր են զբաղեցնում կյանքի տարբեր բնագավառներում: Նրանք թերևս նվազ արությանը են գզում իրենց ազգային պատկանելությունը, ոմանք մոռացել են մայրենի լեզուն, նրանց երեխաներն իրենց անհամեմատ ավելի կոսմոպոլիտ են գզում: Բայց հայերի նոր ալիքի հայտնվելն այդ մարդկանց ևս ներգրավում է ազգային և

մշակութային ինքնության ձեռքբերման գործընթացում, մանավանդ որ այսօր Ռուսաստանում թե՛ ռուսները և թե՛ մյուս ժողովուրդներն իրենք են փորձում գտնել սեփական ինքնությունը: Դա հանգեցնում է այն բանին, որ էթնոլոգիականության կապերը դառնում են ավելի կարևոր, քան մախրոդ տարիներին, երբ Ռուսաստանի քաղաքացիների ինքնությունը որոշվում էր ոչ թե սեփական էթնոսի, այլ պետության հանդեպ վերաբերմունքով:

**- Հայերը համահավաք բնակվում են Ռուսաստանի հարավի բազմաթիվ քաղաքներում: Բայց հաճախ խոսվում է տեղական ռուս բնակչության, կազակների հետ հայերի խնդիրների և հակամարտությունների մասին: Ռուսաստանի հայերի միությունն ի՞նչ ձևով է մասնակցում այդ հակամարտությունների լուծմանը: Ինչպե՞ս եք գնահատում իշխանությունների դիրքորոշումն այդ իրավիճակներում:**

- Այո, հայերն ապրում են Ռուսաստանի հարավի բազմաթիվ քաղաքներում՝ Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Ռուստովի մարզում: Բայց այդ վայրերում եղել են նաև հայկական իին համայնքներ, որոնք մի քանի փուլերով ձևավորվել էին 19-րդ դարում, Առաջին աշխարհամարտից և ցեղասպանությունից հետո: Այն ժամանակ հայ գաղթականները բնակություն հաստատեցին Ռուսաստանի հարավում և դարձան բնակչության օրգանական մասը: Դրանք նաև դրինահայերն են, որոնք ինքնեցին այսօր Ռուստովի մասը կազմող Նախիչևան քաղաքը: Խորհրդային Միության փլուզումից հետո բազմաթիվ հայեր եկան այդ քաղաքներ և համայնքներ, քանի որ այնտեղ ունեին ազգականներ և միջավայրն էլ ծանոթ էր: Իրոք, հատկապես 90-ական թթ. այստեղ ծագեցին միասնական երկրի տրոհման հետ կապված խնդիրներ, չկային տարբեր էթնիկական խմբերի փոխգործողության արդյունավետ մեխանիզմներ, սկսվեց «վայրի» կապիտալիզմի գործընթաց. ոմանք հարստանում էին, մյուսներն՝ աղքատանում: Եվ շատերի համար ձեռնտու էր իրենց քաղաքական նպատակներով օգտագործել ունեցվածքային շերտավորումը՝ դրան տալով էթնիկական երանգավորում. իբր ոմանք հարստացել են մյուսներին հաշվին: Բախումներ էին լինում նաև կենցաղային հողի վրա: Պետք է ասել, որ իշխանական կառույցների ներկայացուցիչներն ևս մասամբ նպաստում էին այդ երևույթներին: Դա հատկապես ցայտուն արտահայտվեց Կրասնոդարի երկրամասում Կոնդրատենկոյի կառավարման ժամանակամիջոցում:

Վերջին տարիներին Ռուսաստանի հայերի միությունը նկատելիորեն աշխատանք է կատարել: Մենք կանոնավորապես լինում ենք Ռուսաստանի հարավում, այցելում Կրասնոդարի, Սոչիի, Ստավրոպոլի և այլ քաղաքների հայ համայնքներ: Հանդիպումներ ենք ունենում Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների, նահանգապետների, իրավապահ մարմինների ներկայացուցիչների, պաշտոնատար անձանց հետ, տեղերում կապեր հաստատում կազակների և հայկական համայնքների միջև: Այնպես որ, այսօր տեղական իշխանությունները չունեն էթնիկական խմբերի տարանջատման քաղաքական գիծ: Նրանք հասկանում են, որ Ռուսաստանի հարավում անհրաժեշտ է կայունություն. չէ՞ որ մոտերքում Չեչենիան է: Մյուս կողմից, ուժեղացել է բուն պետությունը, և նախագահական իշխանության ուղղահայացն այսօր շրջանային պետերի վրա ներգործելու անհամեմատ ավելի լուրջ հնարավորություններ ու լծակներ ունի, որպեսզի նրանք պահպանեն ազգամիջյան հաշտությունն ու համաձայնությունը և ոչ թե լուրջ բարդություններ ստեղծեն հենց պետության ու նրա սպազայի համար: Ազգամիջյան հարաբերությունների խնդիրն այսօր դառնում է պետական քաղաքականության գլխավոր գերակայություններից մեկը: Ահա թե ինչու ինձ թվում է, որ ապագայում այդ ոլորտին կուղղվեն ֆինանսական և մտավոր խոշոր ներդրումներ, որպեսզի կանխվի բացասական գործընթացների գարգացումը:

**- Հայաստանը, նրա քաղաքականությունը և ղեկավարությունն ինչպիսի՞ ազդեցություն են գործում Ռուսաստանում ապրող հայերի վրա: Եվ կա՞նք արդյոք ռուսաստանցի հայերի հակադարձ ազդեցությունը Հայաստանի իշխանությունների որոշումների վրա:**

- Ռուսաստանում ապրող հայերի վրա Հայաստանի և նրա իշխանությունների անմիջական ազդեցությունն աննշան է, թեպետև պետք է ասել, որ Ռուսաստանի հետ Հայաստանի բարիդրոցական, դաշնակցային հարաբերությունները և գործընկերությունը, արտաքին քաղաքական և ռազմական ջանքերի համակարգումը Ռուսաստանի հասարակայնության մեջ և իշխանական կառույցներում բարենպաստ մթնոլորտ ու ֆոն են ստեղծում հայերի հանդեպ: Դա իրոք կարևոր նշանակություն ունի: Բայց Հայաստանը, իմ կարծիքով, առայժմ բավարար առաջընթացի չի հասել Ռուսաստանի հայկական կապիտալի ներգրավման մեխանիզմների ստեղծման գործում: Չկա Հայաստանի իշխանական կառույցների փոխգործողության ինստիտուցիոնալ մեխանիզմն ունյինսկ այնպիսի կազմակերպության հետ, ինչպիսին է Ռուսաստանի հայերի միությունը, որի շրջա-

նակներում միավորված են Ռուսաստանի գրեթե բոլոր հայկական համայնքները: Սրանում կան որոշակի խնդիրներ և բացթողումներ, որոնք Հայաստանի ղեկավարությունը փորձում է լուծել, ինչպես ինքն է հայտարարել, առավել արդյունավետ մեխանիզմի ստեղծմամբ, որը թերևս կձևավորվի 3-րդ Համահայկական ֆորումի ժամանակ: Հայաստանի իշխանությունները մտադիր են այդ համաժողովը իրավիճակից ելնող տարի երևանում:

Ինչ վերաբերում է Հայաստանի իշխանությունների որոշումներին վրա հայ համայնքի ազդեցությանը, այստեղ ևս կան ինչպես որոշակի ձեռքբերումներ, այնպես էլ խնդիրներ: Նախ և առաջ հայկական սիտուացից, ոմանց կարծիքով, հանրապետություն մուտք գործող 1 կամ 1,5 մլրդ դոլարի կեսը, եթե ոչ ավելին, ընկնում է ռուսաստանցի հայերին: Նրանք իրենց փողերով ամնիջականորեն պահպանում են Հայաստանի Հանրապետության կայունությունը: Եվ եթե Հայաստանում չկան սոցիալական և «սովյալ» խռովություններ, ապա դա զգալի չափով պայմանավորված է ոչ թե իշխանությունների գործունեությամբ, որոնք պարտավոր են տեղական բնակչությանն ապահովել աշխատատեղերով, վճարել պատշաճ աշխատավարձ և թոշակ, այլ արտաքին ֆինանսական օժանդակությամբ: Եվ դա վերացնում է սոցիալական լարվածությունը: Ռուսաստանցի հայերը և Ռուսաստանի հայերի միությունն իրենց գործունեության մեջ ղեկավարվում են նրանով, որ ռուսաստանյան կապիտալն ավելի լավ ներկայացված լինի Հայաստանում: Պատահական չէ, որ մենք շատ ակտիվ էինք «Գույք պարտքի դիմաց» գործարքին ուղղված ջանքերում, որպեսզի Ռուսաստանն արդիականացնի Հայաստանի ձեռնարկությունները և հազարավոր մարդկանց ապահովի աշխատատեղերով, պատշաճ վարձատրությամբ, ինչը կլինեի Հայաստանի և Ռուսաստանի տնտեսական հարաբերությունների ամրապնդման շատ լուրջ գործոն: Մենք նաև ջանում ենք մեր նպատակային ծրագրերը կազմել փոքր և միջակ քիզնեսի ոլորտում, որպեսզի դրանք իրագործենք հենց Հայաստանում՝ հավելյալ աշխատատեղեր ստեղծելու համար: Ռուսաստանցի հայերը, այդ թվում նաև մեր կազմակերպությունը, ջանում են իրենց մտավոր և քաղաքական հնարավորությունների սահմաններում մասնակցել հայ ժողովրդի համար լուրջ այնպիսի հարցերի լուծմանը, ինչպիսիք են Դարաբաղի խնդրի կարգավորումը և Հայաստանի ու Թուրքիայի հարաբերությունների կանոնավորումը:

**- Վրաստանի նախագահը վերջերս հայտարարեց, որ հետխորհրդային տարածքի, այդ թվում Հարավային Կովկասի արմատական ժողովրդավարացումը շարունակվելու է: Նկատի ունենալով, որ Ադրբեջանի իշխանություններին ըստ երևույթին հաջողվել է խուսափել «Նարնջագույն» սցենարից, ստացվում է, որ հերթը Հայաստանի՞նք է: Ինչպիսի՞ն է Ռուսաստանի հայերի միության դիրքորոշումն իրենց պատմական հայրենիքում «հեղափոխության» հնարավորության կապակցությամբ:**

- Կարծում եմ, Վրաստանի նախագահն ասում է այն, ինչ դեռ վերջերս ասում էին նրա «ավագ ընկերները»: Ես նկատի ունեմ նախագահ Բուշին, ըստ որի վարչակարգերը փոխելու ամերիկյան ռազմավարությունը շարունակվելու է: Այդ քաղաքականությունը կարող է շարունակվել թե՛ Հարավային Կովկասում, թե՛ Կենտրոնական Ասիայում: Իրոք, Բաքվում վերջերս տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ էլ Ռուսաստանը շահագրգռված չեն եղել Ադրբեջանում «Նարնջագույն հեղափոխության» հաղթանակով, իսկ ընդդիմությունը դրա հնարավորությունը չի ունեցել: Ամերիկացիները շահագրգռված են այդ շրջանի կայունության պահպանմամբ, նկատի ունենալով, որ իրենց ընկերությունները միլիարդներ են ներդրել Կասպից ծովի նավթի ու գազի պաշարների յուրացման մեջ: Ահա թե ինչու ամերիկացիների առանձնակի հետաքրքրությունն են տեսնում այդ տարածաշրջանի նկատմամբ: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, չեմ կարծում, թե այնտեղ «Նարնջագույն հեղափոխության» ներուժ լինի: Իշխանությունը բավականաչափ ամուր է, չկա լուրջ պառակտում ռուսամեն և արևմտամեն ուժերի, որը կար Ուկրաինայում կամ Վրաստանում: Թեև Վրաստանում ըստ էության արևմտամեն գործիչ Շևարճաձեին փոխարինեցին մեկ ուրիշ՝ էլ ավելի արևմտամեն քաղաքական գործիչով: Հայաստանում չկան նման լիդերներ, համեմայն դեպս, առայժմ չկան: Եվ ինձ թվում է, որ մոտ ապագայում հազիվ թե ստեղծվեն «Նարնջագույն» սցենարի նախադրյալներ:

Որպես Ռուսաստանի հայերի միության ղեկավար, ես սկզբունքորեն ամեն մի հեղափոխության կտրական հակառակորդն եմ: Հեղափոխությունները հանգեցնում են ապակայունացման, կարող են հանգեցնել քաոսի և անկառավարելիության: Հայաստանում ներկա պայմաններում, հատկապես նկատի ունենալով դարաբայան պատերազմի կապակցությամբ Ադրբեջանի հետ, ինչպես նաև Թուրքիայի հետ չկարգավորված հարաբերությունները, նաև քաոս և անկայունություն ստեղծելը կլինեի չափազանց մեծ «շքեղություն»:

# ԷԶՐԱՍ ԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆ. «ՌՈՒՍԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԲՈԼՈՐԻՍ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ»



Մոսկվա քաղաքի ճարտարապետական խորհուրդը հավանություն տվեց Ռուսաստանի մայրաքաղաքում կառուցվելիք հայկական տաճարի նոր նախագծին: Մինչ այդ այն հաստատվել էր Ամենայն հայոց կաթողիկոսի և Սբ. Էջմիածնի ճարտարապետական խորհրդի կողմից: Վերջապես հնարավորություն է ստեղծվում կենդանացնելու շինության արդեն որերորդ տարին «հնացող» հիմքերը, և Նոր Նախիջևանի ու Ռուսաստանի հոգևոր թեմի առջև բացվում է կառուցողական եռուն մի շրջան:

Առհասարակ ի՞նչ կյանքով է ապրում ռուսահայության հոգևոր կենտրոնը, ի՞նչ հոգսերով է համակված նա մեր այս անհանգիստ ժամանակներում: Այս թեմայով էր մեր զրույցը թեմի առաջնորդ Եզրաս Եպիսկոպոս Ներսիսյանի հետ:

- Սրբազան հայր, ներկեղեցական «խռովարար» իրադարձությունների ավարտից հետո առաջին անգամ ենք հանդիպում: Ի՞նչ է կատարվել Ձեր զլխով անցած «ամպերից» հետո:

- Մեր հոգևոր առաքելությունը մնում է «անասան» (Ժպտում է). նպատակը եղել ու մնում է նույնը՝ մարդկանց մեջ սերմանել այն մաքուր, անկեղծ հավատքը, որ պիտի դառնա ապրելու իմաստը, ամրապնդել այն հոգևոր արժեքը, որ պիտի ծառայի նրանց որպես կյանքի խարիսխ: Տվյալ դեպքում՝ ռուսահայության մեջ, հատկապես այս նոր իրողությունների պայմաններում, երբ հոգևոր, բարոյական արժեքները զիջում են նյութականին, երբ, ցավոք, կարևորվում է ժամանակավորը:

- Դուք հաճախ եք հիշատակում ավետարանական այն խոսքերը, որ հավատքը մեռած է առանց գործի: Եվ Ձեր հոգևոր գործունեությունն էլ միշտ զուգորդվել է հիանալի նյութական արժեքների ստեղծմամբ, լինի դա եկեղեցաշինություն, կրթական, համայնքային, մշակութային, հրատարակչական գործ թե մի այլ բան: Ի՞նչ է արվել այս ընթացքում՝ մասնավորապես Մոսկվայում:

- Իրագործվել են որոշ մտահղացումներ և նախապատրաստական մեծ աշխատանքներ են կատարվել որոշ խոշորածավալ կառույցների շինարարության համար: Մոսկվայում սկսել է հրատարակվել

«Արմյանական ցերկով» պարբերականը, առաջմ միայն ռուսերեն, քանզի ռուսահայության մի զգալի մասը, ցավոք, չգիտի կամ վատ գիտի մայրենի լեզուն: Հրատարակությունը կոչված է ճանաչելի դարձնելու հայ եկեղեցին նաև ռուս հասարակայնության շրջանում:

- Մինչև Ձեզ հետ հանդիպելը ծանոթացա առաջին երկու համարին. որակյալ հրատարակություն է՝ սեղմ, իմաստախորհուրդ նյութեր, հոյակապ լուսանկարներ, բարձրաճաշակ ձևավորում: Անչափ տպավորիչ է, օրինակ, «Հայկական Երուսաղեմին» նվիրված լուսանկարաշարը:

- Շնորհակալ եմ: Մոսկվայի մետրոյի «Նովոլուրոդսկայա» կայարանի մոտ շուտով կավարտենք երեք հարկանի շենքի հիմնանորոգումը, որտեղ կսկսի գործել Հայեցի դաստիարակության կենտրոնը: Սա ավելին կլինի, քան կրթական օջախը: Այստեղ կլինի դպրոց, որտեղ լեզվի ու գրականության հետ մեկտեղ կդասավանդվի հայ կրոնի պատմություն, կգործեն երգի, պարի, նկարչության, երաժշտության և շատ այլ խմբեր, կկազմակերպվեն բազմաբնույթ հանդիպումներ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ և այլն: Շատ բան կծնավորվի ընթացքում: Խնդիրը մեկն է՝ հաստատություն մտնող անձը պիտի այնտեղից դուրս գա հայ ոգով պարուրված:

Այսուհանդերձ մեր գործունեության կիզակետը կդառնա նոր տաճարի կառուցումը Մոսկվայի հարգաշատ թաղամասերից մեկում՝ Օլիմպիսկի պողոտայի վրա:

- Իսկ նոր նախագիծը ինչո՞վ է տարբերվում նախկինից:  
- Առավելագույնս հաշվի են առնված մեր ավանդական ճարտարապետությունը ռուսական քաղաքի նկարագրին ներդաշնակեցնելու պահանջները: Ի դեպ, Մոսկվայի գլխավոր ճարտարապետը մեծ գովեստով արտահայտվեց նոր նախագծի մասին: Հետաքրքրական է, որ մերծակա որոշ աշխարհիկ կառույցներ կփոխեն իրենց պրոֆիլը մեր տաճարի «բարերար» ազդեցության տակ:

25 հազար քառակուսի մետր տարածություն զբաղեցնող հոգևոր համալիրը կունենա առաջնորդարան, դպրոց, հրատարակչություն, թանգարան, վարչական բնակելի մասնաշենք, գրադարան, հյուրանոց, բարեգործական ծառարան և այլն:

- Լսել եմ, որ ծրագրել եք այնտեղ բացել նաև ճեմարան:  
- Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ռուսահայությունն այսօր կազմում է սփյուռքի ամենաստվար հատվածը և նրա հոգևոր բարգավաճման համար նպատակահարմար է սեփական կադրեր պատրաստել տեղում: Հարցը քննարկվել է Վեհափառ հայրապետի հետ և արժանացել ինչպես նրա, այնպես էլ Ռուսիո պատ-

րիարքի օրհնությանը:  
- Իսկ խոսակցությունները «Պոլկոննայա գորա» հուշահամալիրում հայ մատուռի կառուցման մասին:

- Քաղաքային իշխանությունների հետ ձեռք բերված համաձայնությունների հիման վրա ընթացքի մեջ են համապատասխան ձևակերպումները, որոնց վերջնական հաստատումով էլ պայմանավորված է շինարարության սկիզբը:

- Սրբազան, «մատերիալիստական» հարցերում Դուք հույս դնո՞ւմ եք տեղի հայերի վրա:

- Ես կուզեմայի մի անկեղծ խոստովանություն անել: Երբ նոր էի տեղափոխվել Մոսկվա և բախվում էի Ձեր հիշատակած «խռովությանը», որոշ կասկածներ ունեցա մոսկվահայության մի մասի բարեպաշտության նկատմամբ: Մի պահ թվաց, թե հավատքի ու ազգասիրության գործոնն այստեղ տկար է, հոգևոր հենքը՝ վտանգված մանրախնդրությամբ: Սակայն կյանքը ցույց տվեց, որ իրավացի չէին մեր մտավախությունները: Այսօր իմ վստահությունները լիակատար է. փառք եմ տալիս Աստծուն և հավաստում՝ Ռուսաստանում և Մոսկվայում ապրում են հայորդիներ, որոնք իրավամբ կրում են իրենց բարեգործ հայրերի Լազարյանների, Մանթաշովների, Գյուլբենկյանների, Մանուկյանների և մյուսների ազգասեր վեհ ոգին:

- Գուցե որևէ օրինակ բերեք:

- Խնդրեմ, վերջերս տեղի ունեցավ հոգաբարձուների ժողով: Իրագեկեցի, որ նոր եկեղեցու կառուցման հարցը լուծվել է բոլոր մակարդակներով, և առանց որևէ հավակնության պարզ հարցով դիմեցի նրանց ի՞նչ ենք անելու: Ի զարմանս ինձ, կես ժամում «ստորագրվեց» մոտ 10 միլիոն դոլարի գումար: Ազգային հոգևոր արժեքներին հավատարմության, արժանապատվության, հավաքական կյանքի, միասնական ոգու աննախադեպ տուրք էր սա՛ արժանի ամենախնամ օրհնությանը:

- Սրբազան, անկեղծ լինե՞նք, նման պարագաներում նախկինում անառողջ լուրեր էին տարածվում շինարարության վրա կատարվող ծախսերի կապակցությամբ: Ձեզ կհաջողվի՞ խուսափել դրանցից:

- Ես ինքս խորհրդի անդամների առջև դրել եմ ծախսերի թափանցիկության մեխանիզմի ստեղծման հարցը և պատրաստ եմ այն կարգավորել բոլոր շահագրգիռ անձանց հետ:

- Սրբազան, կուզեմայի փոխել խոսակցության թեման և առնչվել Ֆրանսիայում տեղի ունեցած իրադարձություններին: Ասացեք խնդրեմ, նման երևույթ հնարավոր է Ռուսաստանում, նկատի ունենալով, մասնավորապես, «ռուս-կովկասյան» առնչությունների լարվածությունը:

- Ներգաղթածների այդպիսի «կրակոտ» ելույթներ են բացառում են, որովհետև



նրանք այստեղ երբեք ոչ միայն շոյված չեն եղել իշխանություններից, ինչպես Ֆրանսիայում, այլև միանգամայն հակառակը. նրանք գտնվում են լրիվ կախյալ, ընկճյալ վիճակում և հիանալի են հասկանում, որ նմանատիպ ելույթները միայն կվատթարացնեն իրենց դրությունը: Որևէ ճնշում պետական մակարդակով՝ մույնպես բացառում են: Պետք է պարզապես օրենսդրականորեն կարգավորել ներգաղթի խնդիրը, և այդ գործընթացն սկսել է ակտիվանալ:

- Բայց չէ՞ որ, Ֆրանսիայի օրինակից էլ-նելով, հարզը սուր են դնում ռուս ազգայնական ուժերը, շարժումները, կուսակցությունները: Սկիհեղներն արդեն երթ են կազմակերպում Կրեմլի հարևանությամբ՝ «Ռուսաստանը՝ ռուսներին», «Մոսկվան մոսկվացիներին» և նմանատիպ այլ կարգախոսներով:

- Բայց չնոռանանք, որ Ֆրանսիան բնավ էլ Ռուսաստան չէ: Այս երկիրը պատմակա-

նորեն (և ոչ թե ներգաղթի հետևանքով) բազմազգ ու բազմակրոն է, և ամեն մի քիչ թե շատ բանական պետական այդ չի կարող չպատկերացնել, թե ինչ կործանարար հետևանքների կհանգեցնի ազամիջյան անհարիրությունների հրահրումը:

- Կվերհիշվի անմիտ, խելահեղ բունտը: Դուք զգո՞ւմ եք եկեղեցու հարածուն դերը ռուսահայության կենսապահովության գործում:

- Ոչ միայն զգում են, այլև գործում: Ես Ռուսաստանի նախագահին առընթեր կրոնական խորհրդի անդամ են, որի մեջ մտնում են նաև ռուս ուղղափառ եկեղեցու, մուսուլմանների, հուդայականների, բուդդայականների ներկայացուցիչները: Մենք ուշադիր հետևում ենք կրոնական բնույթի իրադարձությունների ընթացքին և հնարավորություն ունենք տարբեր հանձնարարականներով անմիջականորեն դիմելու պետության ղեկավարին: Երկուստեք փոխարդյունավետ համագործակ-

ցություն է պետական հույժ կարևոր ու նրբանկատ հարցերում:

Ես կարծում եմ, որ հակակովկասյան ընդհանուր մթնոլորտի ֆոնի վրա հայերս համեմատաբար արտոնյալ վիճակում ենք: Համեմայն դեպս չեն հիշում մի դեպք, որ որևէ հարցով դիմեն տեղի իշխանական մարմիններին ու արժանանան մերժման կամ, առավել ևս, անհարգալից վերաբերմունքի: Մյուս կողմից, մենք չպիտի մոռանանք, որ հայ լինելով, այս երկրի քաղաքացի ենք և պարտավոր ենք խստիվ պահպանել համակեցության կանոնները, մեր գործով, վարքով, կեցվածքով արժանի լինենք հինավուրց քաղաքակիրթ ազգի ներկայացուցիչը լինելու պատվավոր իրավունքին:

Ռուսահայության կյանքի ապահովությունը պիտի լինի բոլորիս հոգածության առարկան: Երբեք չմոռանանք, որ նա պատմական հայրենիքը սնուցող սփյուռք է:

Ռուբեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Մոսկվա

## ՇԱՀԱԳՈՐԾՎԵՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀՈՂՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ

Պուշկինի լեռնանցքում երեկ շահագործման հանձնվեց Հայաստանում և տարածաշրջանում առաջին՝ 2,6 մգվտ հզորության հողմաէլեկտրակայանը, որը բաղկացած է 4 հողմակներից: Նախատեսվում է արտադրել տարեկան 5 մլն կվտժ էլեկտրաէներգիա: Կայանի ծառայության ժամկետը հաշվարկված է առավելագույն 20 տարի: Հողմաէլեկտրակայանը կառուցվել է Իրանի տրամադրած 3,5 մլն դոլար դրամաշնորհով: Իրանական կողմի հետ նախատեսվում է քննարկել կայանի ընդլայնման խնդիրը: Տեղանքը հնարավորություն է տալիս մինչև 90 մգվտ հզորություն զարգացնելու, մինչդեռ ներկայումս տեղադրված հողմակները միայն 2,6 մգվտ հզորություն ունեն: Էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանը նշեց, որ ներկայումս հողմաէներգետիկայի զարգացման համար ուսումնասիրություններ են կատարվում Սիսիանում և Գյումրիում: Կմշակվի քամու ճշգրիտ քարտեզ, որը հնարավորություն կտա այս ուղղությամբ նոր ներդրումներ ներգրավելու: Ղե ինչ, կարելի է ասել, որ Հայաստանը ի վերջո ունեցավ իր հողմադաշը: Իսկ Դոն Քիչոտների պակաս մեզանում երբեք չի զգացվել:



## Ո՞Վ Է ՃԱՆԱԶԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լիտվայի Սեյմի կողմից դեկտեմբերի 15-ին Հայոց ցեղասպանության ճանաչումով Մեծ եղեռնը ճանաչած և դատապարտած պետությունների թիվը հասավ 18-ի: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են նաև ԱՄՆ-ի 38 նահանգներ, տարբեր քաղաքների քաղաքապետարաններ: Նշենք, որ Հայոց ցեղասպանությունն առաջինը ճանաչել և դատապարտել է Ուրուգվայը 1965 թվականին, նրան հաջորդել են Կիպրոսի և Արգենտինայի խորհրդարանները, Ռուսաստանի Պետդուման, Հունաստանի, Լիբանանի խորհրդարանները, ապա՝ նաև Բելգիան, Շվեդիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, Իտալիան, Ավստրալիան, Կանադան, Սլովակիան և Նիդերլանդների Ազգային ժողովի ստորին պալատը: Այս տարի Ցեղասպանությունը ճանաչել է նաև Լեհաստանը: Մի շարք երկրներ Ֆրանսիան, Բելգիան, օրենք են ընդունել նաև Հայոց ցեղասպանությունը մերժող անձանց դատապարտելու մասին: Այդ քայլին 2006թ. կիստիկ նաև Արգենտինան:

## ՄԻՆԱՍԻ ՎԵՐԱԴԱՐՉԸ

Ջաջուռում դեկտեմբերի 7-ին բացվել է Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանը: Այն ավերվել էր 1988թ. երկրաշարժից: 2003թ. Լինսի հիմնադրամի «Մշակույթ» ծրագրով նկարչի հայրենի Ջաջուռում կառուցվեց նրա նոր տուն-թանգարանը: 2004թ. կառույցը շահագործման է հանձնվել, սակայն ցուցանմուշների բացակայության պատճառով մինչ օրս չէր գործում: Մինասի վրձնած նկարներից բացի, տուն-թանգարանում ցուցադրվում են նաև նկարչի ձևավորած բեմական զգեստների էսքիզները:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

## Գիտնականներն ապշած են

2002 թվականի սեպտեմբերի 11-ին Բուրյաթական Հանրապետությունում գտնվող գերեզմանից դուրս է բերվել 75 տարի առաջ թաղված Խամբո լամայի՝ Դաշա-Դորժո Իթիգիլովի աճյունը: Բուրյաթի զարմացրել է այն, որ լոտոսի դիրքով թաղված լամայի մարմինը որևէ քայքայման չի ենթարկվել: Իթիգիլովը կյանքից հեռացել է մեղիտացիա անելիս: Նրա մարմինն ուսումնասիրող խմբի ղեկավար Գալինա Երշովան ասել է, թե լամայի հողերը կծկվում են այնպես, ինչպես կենդանի մարդունը: Գիտնականները մեկ տարի առաջ լամայի աճյունն ուսումնասիրության համար տեղափոխել են Մոսկվա և արդեն այժմ ստիպված են խոստովանել, որ նրա հյուսվածքները դեռևս կենդանի են: Այսուհանդերձ, գիտնականները չեն կարողանում պատասխանել այն հարցին, թե ինչու չի քայքայվում մահացած մարդու մարմինը: Սա առաջին դեպքն է, երբ գիտություն է նման երևույթի: Բուդդայականները հավատում են, որ Իթիգիլովը կենդանի է և գտնվում է հատուկ վիճակում:

# ՆԱՐԵՉԱԳՈՒՅՆ ԵՐԿՐԻ ՆԵՐԿԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ ՀԱՅԵՐԸ ԴԻՏՈՐԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄԵՆ

## Ուկրաինահայ սփյուռքը ապրում է կտրտված ու հատվածաբար

Թե քանի հայ է ապրում այսօր Ուկրաինայում, ոչ ոք հստակ չգիտի: Պաշտոնական վիճակագրությունը նշում է 200 հազար թիվը, բայց ըստ Ուկրաինայում Հայաստանի դեսպան Արմեն Խաչատրյանի, այդ թիվը կրկնակի է: Կիևում ապրում է 8-10 հազար հայ: Համայնքն անհամեմատ համախմբված ու միաձուլյ էր 1988-ի դեկտեմբերյան երկրաշարժից հետո ու դարաբաղյան պատերազմի տարիներին, երբ հանգանակություններ ու օգնություններ էին կազմակերպում Հայաստանի համար: Այսօր համայնքը կտրտվել, հատվածաբար է հոգում իր հոգսերը: Հարաբերականորեն միասնական են դառնում միայն տոն օրերին՝ Նոր տարի, մայրություն, անկախության օր: Այդ հանդիսություններին էլ հազիվ 40-50 հայ է հավաքվում:

Նարեչագույն հեղափոխությունը ապրած է այսօր էլ սեփական խնդիրների մեջ գլուխը կորցրած երկրում ազգային փոքրամասնությունների հոգսերին առանձնակի ուշադրություն չեն դարձնում: Ուկրաինահայ համայնքը ոչ միայն ինքնությունը պահպանելու խնդիր ունի: Մարտի 26-ին կմեկնարկեն Գերագույն ռադայի ընտրությունները: Չվնասվելու և ներքաղաքական բարդ իրավիճակում ավելորդ ու վտանգավոր գլխացավանքների մեջ չընկնելու համար հայերն աշխատում են հեռու մնալ քաղաքական տուրևառումներից: Իրենց քաղաքական համոզմունքներում նրանք միատարր չեն, բայց աշխատում են թաքցնել դիրքորոշումները և հայտնվել են ավելի շատ դիտորդի կարգավիճակում: «Ես կարծում եմ, որ այս պահին հայերիս համար ամենակարևոր խնդիրը խորհրդարանի ընտրություններին նախորդող այս 3-4 ամիսը հանդարտ, առանց բարդությունների անցկացնելն է: Հայերը ցրված են ապրում, տարբեր քաղաքներում ու գյուղերում, և քաղաքականության մեջ ներքաշվելը կարող է ճակատագրական լինել նրանցից յուրաքանչյուրի համար», ասում է Ռադայի հայ պատգամավոր Նվեր Մխիթարյանը:

Ինչպես ողջ ուկրաինացի ժողովուրդը, հայ համայնքն էլ հիասթափություն է ապրում նարեչագույն հեղաշրջումից: Այն հայերի կենսամակարդակի վրա էլ ոչ մի էական ազդեցություն չունեցավ, հակառակը՝ սրեց սոցիալական բոլոր խնդիրները: Համեմայն դեպ, ուկրաինացիների նման իրենք էլ ապրում են հույսով, որ մի քիչ պիտի համբերեն և ամեն ինչ լավ կլինի:

Կիևում հայոց 2 կիրակնօրյա կրթարան է գործում, որ դժվար է դպրոց անվանել: Աշակերտների թիվը տատանվում է 8-ից մինչև 2 տասնյակի սահմաններում: Այս տարի հայկական դեսպանատանը հաջողվեց լուծել կիրակնօրյա դպրոցների դասագրքերի ու գրականության խնդիրը: Հայ դպրոցականներ ավելի շատ կան թիվ 85 դպրոցում, որը տարբեր ազգերի երեխաների համատեղ ուսուցման օջախ է:

Կրթական և այլ առումներով ևս Հայաստանի հետ համայնքի համագործակցությունը սահմանափակվում է ամեն տարի ուսուցիչների կատարելագործման նպատակով Երևան մասնագետներ ուղարկելով:

Ուկրաինայում աղքատ հայեր չկան, նրանք զբաղված են ամենատարբեր ոլորտներում՝ բժիշկներ, ուսուցիչներ, դասախոսներ, շինարարներ, արհեստավորներ: Հայերի միջին կենսամակարդակը ցածր չէ, վերջին շրջանում նույնիսկ միանգամայն որոշակի բեռնացում է արձանագրվում: Մթերքի ու հագուստի գներն այստեղ գրեթե նույնն են, ինչ Հայաստանում: Միջին աշխատավարձը 100 դոլար է, նվազագույնը՝ 70:

Գործադիր մարմիններում ևս հայերը բավական ակտիվ են ներկայացված: Խարկովի մարզի նահանգապետը հայ է, շատ հայեր բազմաթիվ պաշտոններ են գրավում, օրենսդիր մարմնում աշխատում է 4 պատգամավոր: Վերխովնայա ռադայում նրանց հաջողվեց բարձրացնել Հայոց ցեղասպանության խնդիրը: Լոբբինգ է տարվում այդ ուղղությամբ, որպեսզի Ռադան ևս որոշում ընդունի ցեղասպանության մասին: Ռադայի նախագահն ու կոմիտեի նախագահները ողջունեցին ցեղասպանության 90-ամյակի մասնակիցներին՝ 3 անգամ օգտագործելով ցեղասպանություն բառը: Նշեցին, որ ժամանակը եկել է, որպեսզի Ռադան

ճանաչի ցեղասպանությունը: Խնդրի քննարկման շուրջը նույնիսկ տարբեր քաղաքական ուժերի մեծ հավաք եղավ: Ուկրաինայում Թուրքիայի դեսպանը նույնիսկ իրար անցած մի քանի անգամ հանդիպեց Մարդու իրավունքների կոմիտեի նախագահի հետ:

Ուկրաինայի ամենահայտնի հայը Ռադայի պատգամավոր, մեծահարուստ գործարար Նվեր Մխիթարյանն է: Նա զբաղվում է շինարարական բիզնեսով և մայրաքաղաքի կենտրոնում էլիտար ու շքեղ բազմաթիվ շենքերի հեղինակ է:

Շատ հայեր, որ այստեղ հայտնվել են երկրաշարժից հետո ու դարաբաղյան պատերազմի ընթացքում, այնուամենայնիվ, մտածում են Հայաստան վերադառնալու մասին: Սա հայերի այն զանգվածն է, որ առ այսօր վարձով է ապրում, քաղաքացիություն չունի, և բնականաբար, առավել շատ է կրում երկրում ընթացող ցավազին գործընթացների ազդեցությունը: Նրանց մեծ մասն այսօր դրամ է հավաքում Հայաստան գնալու և այստեղ սեփական հարկն ունենալու համար:

Չունման վտանգ, ինչպես սփյուռքի յուրաքանչյուր անկյունում, այստեղ էլ կա: Հայախոս է միայն միջին սերունդը: Նրանց գավակները հայերենն օգտագործում են միայն տանը, իսկ գրավոր խոսք գրեթե զանգվածաբար չգիտեն: «Այս իրողությունն անկասկած ավելի կխորանա, որովհետև շաբաթը 1 անգամ, այն էլ ոչ կանոնավոր պարբերականությամբ ընթացող կիրակնօրյա դասընթացները չեն կարող հային հայ պահել», ցավով ասում է «Արագած» հայկական ամսաթերթի գլխավոր խմբագիր Ժենյա Ծերունյանը: Հայատառ պարբերականը ևս ժողովրդականություն չի վայելում: Նախկին 5000-ի փոխարեն այսօր 1500 տպաքանակ ունի, սակայն դա էլ չի իրացվում: «Գործարար մարդուն են ընկալում են նախ և առաջ իբրև բարեգործի: Ես երազում եմ Մանթաշովի նման գործարարների մասին», շարունակում է նա, նշելով, որ ուկրաինացի հայ գործարարներին քիչ են հետաքրքրում թերթին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու, հայկական կանոնավոր դպրոց ու եկեղեցի հիմնելու խնդիրները: «Հայ պատգամավորներն ու գործարարները կարող են օգտակար լինել և համայնքին, և՛ թերթին, բայց ինչպես ամենուր, այստեղ էլ ավելի շատ իրենց խնդիրներն են լուծում»: Ուկրաինայում հայալեզու մյուս պարբերականը՝ Դրիմում տպագրվող «Մասյաջ աղավմի» ամսաթերթն է:

Ուկրաինայում ոչ պետական, ոչ կենցաղային մակարդակով հայերի նկատմամբ ատելություն ու անհամադրոժողակալություն չկա, ինչպես Մոսկվայում է՝ ԱՊՀ երկրների քաղաքացիների հանդեպ:

Հայ տղաներին ևս հայուհիներին սիրում են այստեղ, բայց հայ ծնողները չեն խրախուսում խառն ամուսնությունները, որպիսիք ավելի ու ավելի հաճախ են արձանագրվում: Նվեր Մխիթարյանի կինը ևս ուկրաինուհի է: Աժ նախագահի վերջերս Ուկրաինա կատարած այցելության օրերին նախագահի պատվին տված ճաշկերույթում հայ պատվիրակության անդամներին նա շլացրեց իր գեղեցկությամբ ու շքեղ արդուզարդով:

Հայկական առաջին եկեղեցիներն Ուկրաինայում կառուցվել են 9-րդ դարում:

Կիևում հայկական եկեղեցի կառուցելու մասին արդեն 3-4 տարի միայն խոսակցություններ են գնում: Ասում են, որ 3 մլն դոլար է պետք դրա համար, և հանգանակություն պիտի արվի: Նվեր Մխիթարյանը հավատացնում է, որ տարածք արդեն հատկացվել է, և շուտով շինարարություն կսկսվի: Երկրի մյուս քաղաքներում Պոդոլսկ, Լվով, Օդեսա, Խարկով և այլն, 14 հայկական գործող եկեղեցիներ կան: Անցած տարի պատգամավորի գործուն մասնակցությամբ Լվովի 700-ամյա հայկական եկեղեցին «հետ վերցվեց» Ուկրաինացիներից, որ մեծ իրադարձություն էր տեղի հայերի համար:

1996-ին ուկրաինացիները մեծ շուքով նշեցին քրիստոնեության ընդունման 1000-ամյակը: Պատմական աղբյուրները վկայաբերում են, որ Ուկրաինայում քրիստոնեությունը տարածել է

Ուկրաինայի ազգային հերոս Վլադիմիրի հայուհի կինը՝ Աննան: Աննան Բյուզանդիայի Վասիլի (Բարսեղ) կայսեր քույրն է եղել: Վասիլի կայսրը ծագումով հայ է, և Աննային կնության է տվել Վլադիմիրին՝ 2 երկրների բարեկամական կապերն ամրացնելու համար: Բյուզանդացիները նրան Վասիլի են անվանել, հայերը գիտեն իբրև Բարսեղի: Աննան այստեղ է եկել իր շքախմբով՝ 996 թվականին, և անմիջապես ձեռնամուխ է եղել քրիստոնեությունը տարածելուն: Եվ երևի հենց Աննայի ժամանակներից, շուրջ 1000 տարի հայ և ուկրաինացի ժողովուրդները բարեկամական հարաբերությունների մեջ են:

Կիև-Պեչորյան շքեղ համալիրի եկեղեցիներից մեկում պահպանվում են նաև հայերի հետ առնչությունների բազմաթիվ վավերագրեր: Եղել է մի հայ բժիշկ՝ «վիրմենին», որ «օգտակար գործ է արել՝ բուժել է և՛ հասարակ, և՛ շատ պաշտոնատար անձանց», բայց նրա անունը, ցավոք, չի նշվում վավերագրի մեջ:

Կիևում հայկական եկեղեցի եղել է, բայց ավերվել է 14-րդ դարում: Այստեղ առաքելական եկեղեցու հայ քահանա կա, որ պարբերաբար պատարագ է մատուցում, խորհրդակատարություններ անում: Բայց չկա հավաքատեղի, և ամեն անգամ հազիվ 30-40 մարդ է հավաքվում: Հավատացյալ հայերը իրենց հա-

վառքի պահանջմունքները բավարարելու համար հարում են կրոնական տարբեր ուղղությունների՝ սկսած Sunday աղանդից, որ այստեղ դավանում է մի նեգր, մինչև ուղղափառ ու կաթոլիկ եկեղեցիներ:

Հայ-ուկրաինական ներկա հարաբերություններում նշարվում ու ակտիվանալու միտում են արտահայտում նաև մշակութային առնչությունները: Բոլոր հայկական միջոցառումները՝ հայ նկարիչների ցուցահանդեսներ, համերգներ, կազմակերպվում են օպերայի դահլիճում:

Սակայն պետական մակարդակով այդ հարաբերությունները դեռևս սաղմնային վիճակում են: Ուկրաինան խոշոր երկիր է, իսկ Հայաստանի համար՝ կամուրջ Եվրոպայի ու Արևելքի միջև: 2 պետություններն էլ Եվրոպական մեծ ընտանիքի անդամ լինելու նպատակ ունեն, և այդ շրջանակներում համագործակցությունը կարող է արդյունավետ լինել: Հայաստանի համար՝ հատկապես միջազգային կառույցներում քվեարկությունների ժամանակ: Ուկրաինայի փորձն այս առումով անհամեմատ պատկառելի է մերից:

Կարինե ԴԱՆԻԵԼՅԱՆ



Վրաստանի Մառնեուլի շրջանի հայաբնակ գյուղերից է Աղբյորփին: Աղբյորփի գյուղից ոչ հեռու գտնվում է 13-րդ դարում կառուցված Խուճապի վանքը, շուրջը՝ միջնադարյան խաչքարեր: Գյուղից մինչև Թբիլիսի 1 ժամվա ճանապարհ է: Շրջանի աղբյուրանական գյուղերից հետո կողք կողքի այստեղ իրենց խաղաղ կյանքով շարունակում են ապրել հայկական յոթ գյուղեր, որոնցից վերջինը Աղբյորփին է՝ Քվեմո Քարթլիի ամենաբարեկարգ բնակավայրը: Բարեկարգ տներ, խնամված տնամերձ հողամասեր ու այգիներ, ճանապարհներ: Մարդիկ էլ՝ հյուրընկալ ու բարեհամբույր: Մշակում են հացահատիկ, աճեցնում միրգ ու բանջարեղեն: Բերքի ավելցուկը վաճառքի են տանում Թբիլիսի, իսկ ավելի հաճախ փոխանակում

կարտոֆիլի հետ Տաշիրում և Պրիվոլնոյե բնակավայրում: Գրեթե յուրաքանչյուր ընտանիք կով, խոզ ու ընտանի թռչուններ է պահում, ոմանք զբաղվում են մեղվաբուծությամբ: Գյուղական իշխանության նըստավայր շենքի վրա ծածանվում է Վրաստանի դրոշը: Գյուղում գործում է հայկական միջնակարգ դպրոցը, և շրջակա գյուղերի երեխաները ամեն օր, անկախ եղանակից, անցնում են 6-7կմ ճանապարհ, որպեսզի հասնեն դպրոց: Գյուղի փոստատարը վաղուց անգործության է մատնված: Աշխարհից կտրված աղբյորփեցիների ինֆորմացիայի գլխավոր աղբյուրը հեռուստացույցն է, որով կարելի է դիտել վրացական, հայկական և աղբյուրանական հեռուստահաղորդումներ:

Մշակութային կյանքը չափազանց աղքատիկ է: 12 տարվա ընդմիջումից հետո վերջերս միայն գյուղում հանդես է եկել Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը:

Հնուց ի վեր աղբյորփեցիներն առանձնացել են ուսման հանդեպ առանձնակի վերաբերմունքով: 1919թ. գյուղի բնակիչ Մով-

սես Աթաբեկյանն իրեն պատկանող հողը տրամադրել է համագյուղացիներին՝ դպրոց կառուցելու նպատակով: Դպրոցը կառուցվել է, նրա շրջանավարտներից շատերը բարձրագույն կրթություն են ստացել և այսօր էլ սովորում են Երևանի բուհերում: Թբիլիսիում ուսումը շարունակելը դժվար է հայկական դպրոցների շրջանավարտների համար ֆակուլտետների ընտրությունը խիստ սահմանափակ է:

Գյուղի եկեղեցու արձանագրություններից մեկում հիշատակվում է նույն Մովսես Աթաբեկյանի անունը, որը գումարներ է հատկացրել նաև եկեղեցաշինությանը:

Աղանդների տարածումը գյուղում կանխելու նպատակով Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդարանը 2004թ. կազմակերպել է չկնքված աղբյորփեցիների մկրտությունը:

Վերջին տարիներին հաճախ է գյուղ այցելում լոնդոնաբնակ Անահիտ Ավագյանը: Նրա աջակցությամբ իր ծնողների ծննդավայրում շուտով կվերականգնվի գյուղի միջնադարյան եկեղեցու զանգակատունը:

ԼԼ ՕԳՍԵՆՁՈՒ

## ԱՂՔՅՈՐՓԻ

# ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԵՑԵԼ Է ՆԱԽԱԼԵՉՈՒ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Ըստ ինտերնետի նյութերի, վերջին ժամանակներս տարբեր երկրների լեզվաբանները փորձում են գտնել մարդկության նախալեզուն: Լեզվագետներն առաջ են քաշել հետաքրքրավաճ վարկած: Հնարավոր է, որ մարդկությունը ունեցել է ընդհանուր լեզու:

Որոշ ժամանակ առաջ ավստրալացի լեզվագետները, համարելով աշխարհի տարբեր լեզուները, հայտնաբերել են, որ մարդկությունը կարող էր ունենալ նախալեզու, որը, նրանց կարծիքով, առաջացել է Փոքր Ասիայում՝ ժամանա-

կակից Թուրքիայի տարածքում: Հետաքրքրական հայտնագործություն է կատարել լեզվագետ Նատալյա Տեր-Գրիգորյանը, որ ապրում է աշխատում է Արգենտինայում: Նա առանձնացրել և համարել է աշխարհի տարբեր լեզուների բառեր, որոնք, ըստ գիտնականի, «դրախտային լեքսիկա» են նշանակում: Համեմատության արդյունքում Տեր-Գրիգորյանն առաջ է քաշել մեկ այլ վարկած, ըստ որի մարդկության պատմությունն ու լեզուն ծագում են Արարատ լեռան մոտակայքից: Տեր-Գրիգորյանը հեղինակել է «Առեղծվածային Արա-

րատ» գիրքը, որ հրատարակվել է 2004 թ., իսպաներենով Արգենտինայում, թարգմանվել է նաև ռուսերեն:

Նատալյա Տեր-Գրիգորյան դե Դենյանուկը 1972 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը որպես լեզվագետ, 1988 թ. տեղափոխվել է Ուկրաինա, աշխատել կենտրոնական գրադարանում որպես գիտաշխատող, 1994 թ. տեղափոխվել է Արգենտինա:

Ա. Հ.

# Կուտ ուտողին՝ կուտ չի պակսի կամ Գիր դչի մասին

Մի երկիր կար, որտեղ թագավոր էին կարգում որոշակի պարբերականությամբ՝ մի քանի տարին մեկ, հավաքում էին ժողովրդին և մի հավք էին բաց թողնում, ու հավքը ում գլխին նստե՛ր՝ նա էլ թագավոր էր դառնում: Եսպես էլ ապրում էին՝ ժողովրդավար և իմաստուն ձևով, և ոչ ոք չէր բողոքում ոչնչից: Թե ոմանք դժգոհում էին՝ միայն այն բանից, որ իրենք չէին դառնում թագավոր, հավքն իրենց գլխին չէր նստում:

Մի օր էլ թագավոր դառնալ փափագող մեկը բարձրաձայն դժգոհում է. «Ա՛յ մարդ, էդ անտեր դուռը մի անգամ էլ մեր գլխին չնստեց»: Ի պատասխան՝ նրա մտերիմներից մեկն ասում է. «Թե ուզում ես քո գլխին էլ նստի, գլխիդ մի բուռ կուտ լցրու»: Եսպես պարզ ու հասարակ:

Արևելյան իմաստությունն էսպես է ասում: Բայց միայն այսքանը: Այդ նույն արևելյան իմաստությունն, օրինակ, լռում է այն մասին, թե քանի՞սն էին իրենց գլխին կուտ լցնում՝ մե՛կը, թե՛ շատերը: Տրամաբանելով՝ կարող ենք ենթադրել, որ իմաստուն արևելքցիք դժվար թե չիմանային այս ձևը: Ուրեմն՝ կարող ենք ենթադրել նաև, որ ի վերջո դուռն ինքն էր ջոկում՝ ուն գլխին նստի ու ո՛ր կուտն ուտի:

Բայց չբացառենք նաև, որ կարող էին լինել նաև դչեր, որոնք ամեն ինչից կուշտ կլինեին ու կնստեին այնտեղ, որտեղ կհաճեր իրենց թռչնային կամքը: Չէ՞ որ ամեն դուռ չէ, որ ամեն գլխի կնքստի հաշվի չառնելով նրա և ավելի ներքև գտնվող որկորի պարունակությունը: Ինչպես ասում են՝ ոչ միայն կտիվ:

Այդուհանդերձ՝ կուտ ուտողին՝ կուտ չի պակսի:  
Այսպես, առանց գիրուղուշ գցելու և ծտալեզու խոսքերի ավարտենք մեր թռչնագիրը:

Խորեն ԳԱՄՊԱՐՅԱՆ

## Այսպես խոսեց...

Ոսկու պատճառով ծագած փոխզիջումներից խուսափելու ամենապարզ միջոցը՝ ոսկի ունենալն է:

Սալվադոր Դալի

Շատ են խոսում լավ թագավորների մասին, որոնք ըստ էության ավելի քիչ են եղել լավ թագավոր, քան պարզապես եղել են լավ մարդիկ:

Գեորգ Լիխտենբերգ

## Վարկած

Պատմում են, որ մի անգամ, երբ նախաճաշարյան մարդիկ մամոնտ էին որսում, վայրենիներից մեկն առաջարկեց շրջապատել կենդանիներին ու քշել ծուղակը: Այդպես հայտնվեցին երկրի վրա գորավարները: Երբ մամոնտին խորովեցին, բոլորը կուշտ կերան ու մսից մի քիչ ավելացավ, մի վայրենի առաջարկեց պահել դա սառը քարանձավում: Այդպես հայտնվեցին երկրի վրա գործարարները: Սակայն գիշերը ինչ-որ մեկը թռցրեց միսը սառը քարանձավից: Այդպես հայտնվեցին երկրի վրա քաղաքական գործիչները:

## Ձոն Ֆաուլզ

# ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

(հատվածներ «Արիստոս» գրքից)

...Հարստությունն ինքնին՝ անմեղ է: Հարուստն ինքնին՝ անմեղ է: Բայց հարստությունն ու հարուստները, շրջապատված աղքատությամբ ու աղքատներով, մեղավոր են:

...Ոչինչ այնպես չի առանձնացնում, ինչպես հարստությունը, և ոչինչ այնպես չի միանմանեցնում, ինչպես աղքատությունը: Դրա համար էլ մենք ուզում ենք հարուստ լինել: Մենք ուզում ենք տարբերվել: Միայն փողով կարելի է գնել և՛ անվտանգություն, և՛ բազմազանություն, որոնք մեզ անհրաժեշտ են: Այսպես՝ փողի ետևից ամոթալի վազքը միաժամանակ վերածվում է բազմազանության ու անվտանգության ազնիվ փնտրության:

Փողը՝ հնարավորություն է, պատահականության կառավարում և դեպի այն՝ մուտքի թույլտվություն, ընտրության ազատություն, իշխանություն: Մի ժամանակ հարուստները կարծում էին, թե կարող են դրախտի տոմս գնել, այսօր դրախտը տեղափոխվել է՝ «այստեղ և հիմա»: Բայց հարուստը չի փոխվել, և նրա հավատը, թե այնուամենայնիվ կարող է դրախտի տոմս գնել երկրի վրա, երևում է՝ արդարացել է:

...Փողը պետք է մեզ նրա համար, որպեսզի գնենք այն, ինչ լավագույն հասարակարգը ձրի է տալիս, այն է՝ գիտելիք, ըմբռնում և փորձ, հնարավորություն՝ կարողալու աշխարհի ծայրի մասին և գնալու այնտեղ: Մի խոսքով՝ կյանքդ անցկացնել չհասկանալով տեսածիդ մեծ մասը, նշանակում է չտեսնել մեծ մասն այն ամենի, ինչին մարյում ես: Աղքատության մեջ ամենասարսափելին նույնիսկ սովը չէ, այլ՝ զարգացման քարացածությունը, որն անպայմանորեն ուղեկցում է նրան:

Հարուստները գնում են բազմազանություն: Դա կապիտալիստական հասարակարգերի մեծ օրենքն է, որոնց համար՝ հոգեբանական ընկճվածությունից խուսափելու ուղին՝ հարստանալն է: Բոլոր մյուս ելքերը փակ են:

Փող ստեղծելու համար ամենևին էլ պետք չէ տիրապետել մարդկային ինչ-որ ազնվաբարո հատկանիշների: Դրա համար էլ փող չինելը՝ յուրատեսակ մի հավասարիչ է: Բնական է դառնում, երբ մարդու մասին դատում են ըստ այն բանի, ինչի նա կարող է հասնել, այսինքն՝ ըստ փողի, և ոչ թե ըստ նրա, ինչի նա չի կարող հասնել երբեք և ոչ մի հանգամանքներում, եթե միայն ջծնվի դրամով:

Բառարանը փողն անվանում է «փոխանակման միջոց»: Ես այն անվանում եմ պատասխան ամմարդկային պատահականությանը, որն իշխում է գոյության վրա: Հանճար, խելամտություն, առողջություն, իմաստություն, կամքի ուժ և ֆիզիկական ուժ, գեղեցիկ արտաքին. այս ամենը՝ շահումներ են, որ ստանում ենք վիճակախաղում, որը խաղարկվել է դեռ մեր ծնունդից առաջ: Փողը՝ մարդկային հանկարծաստեղծ վիճակախաղ է, որը մասնակիորեն պարզատրում է առաջին տիեզերական վիճակախաղում ձախողվածներին: Բայց փողն էական վիճակախաղ չէ, քանի որ շահումները, որ ստացվում են առաջին նախածին փուլում, իրենցից ներկայացնում են հաջորդ խաղարկության անվճար տոմսերի բավականին պատշաճ մի տրոցակ: Եթե ձեր բախտը բերել է առաջինում, ամենայն հավանականությամբ՝ կերիի նաև երկրորդում:

...Մենք հակառակորդներ չենք, այլ եղբայրակիցներ՝ ըստ մարդկային ցեղի: Եվ խելքն ու ազատությունը մեզ տրված են նրա համար, որպեսզի չեզոքացնենք ամբողջ գոյության հիմքում ընկած պատահականության ազդեցությունները և կառավարենք դրանք, ոչ թե դրանց օգնությամբ արդարացնենք անարդարությունը:

Թարգմանությունը՝ Խորեն ԳԱՄՊԱՐՅԱՆԻ

# ԱՐԹՈՒՐ ԱՐԲԱՀԱՄՆ ԱՌԱՅԺՄ ԱՆՊԱՐՏԵԼԻ Է

Վերջերս հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը նոկաուտի ենթարկելով նիգերիացի Կինգսլի Իկեկեին՝ նվաճեց IBF վարկածով միջին քաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Զնայած նախկին երևանցին այժմ հանդես է գալիս գերմանական ակումբում, նա ամեն մի հաղթանակից հետո բարձրացնում է նաև մեր եռագույնը:



Հայազգի բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը նվաճեց IBF-ի վարկածով միջին քաշում (72,6 կգ) աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Լայպցիգում կայացած մենամարտում Աբրահամը 5-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց նիգերիացի Կինգսլի Իկեկեին: Ինչպես և սպասվում էր, մենամարտի առաջին իսկ րոպեներից Արթուրը դիմեց բուռն գրոհների և փորձում էր ուժ-



գին հարվածներով նոկաուտի ենթարկել մրցակցին: Թեև Իկեկեին հաջողվում էր խուսափել Աբրահամի հարվածներից, սակայն առաջին մի քանի ռաունդներում, այնուամենայնիվ, մի քանի լուրջ հարված ընդունեց:

Հիշեցնենք, որ մենամարտի նախօրեին տված հարցազրույցում Աբրահամը խոստացել էր մրցակցի «հարցերը լուծել» ժամկետից շուտ: Եվ Արթուրը կատարեց

իր խոստումը: 5-րդ ռաունդում Աբրահամը հուժկու հարված կատարեց մրցակցի գլուխին, այնուհետև հարվածների շարք տեղաց Իկեկեի վրա: Ռինգի մրցավարն անմիջապես դադարեցրեց մենամարտը և ի նշան հաղթանակի բարձրացրեց հայ բռնցքամարտիկի ձեռքը:

25-ամյա Արթուր Աբրահամը վերջին տարիներին բնակվում է Բեռլինում: Պրոֆեսիոնալ ռինգում նա առայժմ անպարտելի է: Անցկացրած բոլոր 19 մենամարտերում էլ հայ բռնցքամարտիկը հաղթող է ճանաչվել: Դրանցից 17-ը նա ավարտել է ժամկետից շուտ: Այսպիսով, հայազգի ևս մեկ բռնցքամարտիկ նվաճեց IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Ա. Գ.

## ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆՆ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԱԿԻՐ



128 շախմատիստներ վիճարկում էին ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Եվ Արոնյանի մրցակից Պոնոմարյովն էլ հենց նման մրցաշարում էր ժամանակին նվաճել աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ավելացնենք նաև, որ նոկաուտ համակարգով անցկացված մրցաշարերում մինչ այդ հայ շախմատիստներից լավագույն արդյունքի էր հասել Վլադիմիր Զակոբյանը, որը եզրափակիչում աշխարհի չեմպիոնի տիտղոսը գիջել էր Ալեքսանդր Խալիֆմանին:

Ընդհանրապես, ընթացիկ մրցաշրջանում Լևոն Արոնյանը շատ հաջող հանդես եկավ: Նա Եվրոպայի անհատական առաջնությունում դարձավ բրոնզե մրցանակակիր, նույն կարգի մեղալ նվաճեց նաև Հայաստանի հավաքականի կազմում աշխարհի թիմային առաջնությունում: Բացի այդ, Ռուսաստանի «Տոմսկի» կազմում նախ նվաճեց այդ երկրի չեմպիոնի կոչումը, ապա դարձավ Եվրոպայի չեմպիոնների գավաթակիր: Լևոնը նաև հաղթող ճանաչվեց արագ շախմատի մրցաշարում, Մայնցում և Ստեփանակերտում անցկացված միջազգային խոշոր մրցաշարերում: Իրոք որ Լևոն Արոնյանի համար տարիսն արգասաբեր էր:

Լևոն Արոնյանը շախմատում արդեն շատ



Լևոն Արոնյանը հաղթական վերջակետ դրեց խանտի Մանսիյսկում անցկացրած իր գերազանց ելույթներին: ՖԻԴԵ-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Ռուսլան Պոնոմարյովի հետ կայացած եզրափակիչ մրցախաղը շահելով 3-1 հաշվով, 23-ամյա հայ գրոսմայստերը դարձավ շախմատի աշխարհի գավաթակիր՝ արժանանալով 100 հազար դոլար պարգևի: Եվ եթե ՖԻԴԵ-ն այս տարի չփոփոխեր աշխարհի առաջնությունների անցկացման կարգը և արգենտինական Սան Լուիսում 8 շախմատիստների մասնակցությամբ չորրորդ աշխարհի չեմպիոնին, ապա Լևոն Արոնյանը փաստորեն կղառնար հայ երկրորդ աշխարհի չեմպիոնը Տիգրան Պետրոսյանից հետո: ԶԷ՝ որ նախորդ տարիներին նույնպիսի նոկաուտ համակարգով

բարձունքներ է նվաճել: Նա մինչև 20 տարեկանների աշխարհի և Եվրոպայի առաջնությունների հաղթող է, աշխարհի չեմպիոնի տիտղոսին է արժանացել նաև մինչև 12 և մինչև 14 տարեկանների մրցաշարերում: Լևոնը դարձել է նաև Հայաստանի չեմպիոն: Այս տարի նա 2724 վարկամիջով տեղ զբաղեցրեց աշխարհի ուժեղագույն շախմատիստների տասնյակում:

Աշոտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



# ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՅՈՑ ՍԲ ԾՆՈՒՆԴՐ՝ ՀՈՒՆՎԱՐԻ 6-ԻՆ

Դեկտեմբերի 25-ին քրիստոնյա աշխարհի մի զգալի մասում տոնում է Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը: Համընդհանուր այդ ցնծությանն առայժմ չի միանում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին: Հայ եկեղեցու հետևորդները տոնում են Բեթղեհեմյան Մանուկի ծնունդը հունվարի 6-ին, իսկ արտերկրի որոշ համայնքներում մուսուլմանական հունվարի 19-ին: Ծննդյան Տոնացույցի այս բազմազանության ակունքները տարբեր են: Իսկ թե ինչու՞ է այդպես՝ ըստ հերթականության:

### Արևմտյան դիվանագիտություն և հայկական ավանդապաշտություն

Ըստ պատմական վկայությունների, վաղ քրիստոնեության շրջանում քրիստոնյա բոլոր եկեղեցիները Քրիստոսի Սբ Ծնունդը տոնում էին հունվարի 6-ին: Այն կրկնակի տոն էր, քանի որ այս օրը նշվում էր և՛ Քրիստոսի Ծնունդը, և՛ Մկրտությունը: Սահմանված այս կանոնն առաջինը խախտեց Հռոմի եկեղեցին 354 թվականին՝ միայնացի անջատելով երկու տոները՝ Ծնունդը և Մկրտությունը: Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ից տեղափոխվեց դեկտեմբերի 25-ը, իսկ հունվարի 6-ը մնաց միայն իբրև Մկրտության օր: Հռոմի Լիբերիոս եպիսկոպոսի այս քայլը, ըստ էության, դիվանագիտական էր: Բանն այն է, որ Հռոմում դեռևս չէին մոռացել հեթանոսական սովորույթները. ձմեռային արևադարձի օրերին ժողովուրդը շարունակում էր մեծագույն խանդավառությամբ նշել արևին նվիրված տոները: Դրանցից մեծագույնը դեկտեմբերի 25-ի Բոլունավիա կոչված օրն էր, որ նաև հռոմեական Ամանորն էր: Եվ ահա հեթանոսական այս տոնը մոռացության ենթարկելու մղումով քրիստոնյա արևմտյան առաջնորդները փորձեցին տոնին հաղորդել քրիստոնեական գաղափար՝ Քրիստոսի Սբ Ծնունդը: Փորձը հաջողվեց, և Լիբերիոսի դիվանագիտական քայլը շուտով համընդհանուր ընդունելություն գտավ: Արդեն 379 թվականին դեկտեմբերի 25-ը տոնվում էր նաև Կոստանդնուպոլսում: Շուտով այս նորամուծությունը մուտք գործեց նաև արևելյան եկեղեցիներ: Հայ եկեղեցին էր միայն, որ հավատարիմ մնաց Սբ Ծնունդը և Մկրտությունը հունվարի 6-ին տոնելու հնամենի ավանդույթին: Եվ այսօր թերևս քչերին է հայտնի, որ Հայ եկեղեցին ևս երբեմն-երբեմն փորձել է միանալ դեկտեմբերի 25-ի Ծննդյան տոնակատարությանը: Ըստ որոշ ուսումնասիրությունների ու մատենագիտական աղբյուրների, մեծ փաստեր արձանագրվել են 5-րդ, 7-րդ և ապա 12-րդ դարերում: Սակայն եզակի այդ փորձերը եղել են ընդամենը պատմական կարճատև պահեր, որ ի վերջո ավարտվել են հունվարի 6-ի հաղթանակով՝ հաստատված Հայ եկեղեցու աստվածաբանների տոմարական հաշվարկներով ու աստվածաբանական հիմնավորումներով: Վերջինիս հիմքում Ավետարանական հայտնի պատմությունն է Ձաքարիայի պապանձման և Եղիսաբեթի հղիության մասին: Սակայն սա արդեն այլ պատմություն է: Ինչևէ, այսօր Հայ եկեղեցին միակ քրիստոնյա եկեղեցին է, որ շարունակում է Քրիստոսի Սբ Ծնունդը և Աստվածահայտնությունը տոնել միասին՝ հնուց ի վեր սահմանված օրը՝ հունվարի 6-ին: Սակայն, հայտնի է նաև, որ Հայ եկեղեցու մի շարք համայնքներում Սբ Ծնունդը կատարվում է հունվարի 19-ին:

### Սբ Ծնունդն ու հին և նոր տոմարները

Այսօր Ռուսաստանի և Վրաստանի թեմերի որոշ համայնքներ, ինչպես նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը Քրիստոսի Ծննդյան տոնը կատարում են հունվարի 19-ին: Այս տարբերության պատճառը Հայ եկեղեցում առկա էին և նոր տոմարների խնդիրն է: 1923 թվականին, երբ Պատրիարքը, ընդառաջ գնալով խորասահմանի և հատկապես Եվրոպայի ու Ամերիկայի թեմերի արևմտաքրիստոնյա, իրապարակեց կոնդակ նոր՝ Գրիգորյան տոմարին անցնելու վերաբերյալ, թվում էր, թե որևէ դժվարություն չի կարող լինել: Այս տոմարով էին վաղուց առաջնորդվում շատ երկրներ ու եկեղեցիներ: Սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ նոր տոմարն անհարմարություններ է ստեղծում հատկապես օրթոդոքս երկրներում ապրող հայության համար: Բանն այն է, որ հույն եկեղեցին այդպես էլ չընդունեց նոր տոմարը: Իսկ Ռուս և Վրաց ուղղափառ եկեղեցիները թեև հայտարարեցին, թե ընդունելու են Գրիգորյան տոմարը, սակայն շուտով իրաժարվեցին դրանից՝ պահպանելով հինը՝ Հուլյանը: Ըստ այս տոմարի էլ ուղղափառ եկեղեցիները դեկտեմբերի 25-ի փոխարեն Սբ

Ծնունդը կատարում են հունվարի 7-ին, իսկ Մկրտությունը՝ 12 օր անց՝ հունվարի 19-ին: Հուլյան հաշվարկով այս նույն օրվա հետ է համընկնում նաև Հայ եկեղեցու Սբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնը: Եվ ստացվում է այնպես, որ ռուսահայ կամ վիրահայ համայնքները առաջնորդվելով հին տոմարով, միանում են այդ երկրների հավատացյալների ուրախությանը: Այսօր Հայ եկեղեցում տոմարական տարբերությունը մի տեսակ «կենցաղային» խնդրի է վերածվել: Սակայն անցյալ դարի 20-ականներին այն իրապես խնդրահարույց էր: 1923 թվականի հայրապետական կոնդակից հետո՝ արդեն հաջորդ տարի պարզվում է, որ հակառակ Հայրապետի հրամանի, Ռուսաստանի և Վրաստանի թեմերում շարունակում են պահպանել հին տոմարը: Իրավիճակը չի փոխում նաև 1924-ին Պատրիարք Ե կաթողիկոսի արձակած երկրորդ կոնդակը՝ կրկին նույն պահանջով: Արմավիրի, Կրասնոդարի, Պյատիգորսկի, Խարկովի և այլ համայնքների եկեղեցական խորհուրդներից ստացված նամակները միաձայն արձանագրում են. ժողովուրդը ոչ մի կերպ չի հաշտվում տոմարի փոփոխության հետ և շարունակում է կատարել տոներն ու պահքերը եկեղեցուց անջատ: Կացությունն առավել քան տագնապահարույց էր: 1926-ին Խորեն արք. Սուրբադեկյանի կազմած զեկուցագրում իրավիճակը զնահատվում է իբրև «եկեղեցու կազմալուծման ազդանշան»: Ռուսահայ ընդդիմախոսները, օրինակ, կասկածելի են համարում նոր տոմարի ճիշտ լինելը: Կարծիք է հայտնվում, որ Ամենայն Հայոց կաթողիկոսն առանց ազգային-եկեղեցական ժողովի չպետք մնան կարգադրություն անել և այլև: Իսկ Արմավիրում իրավիճակն այնքան է սրվում, որ ժողովուրդը պահանջում է կամ շարունակել հին տոմարը և կամ եկեղեցիները փակել և բանալիները հանձնել իրենց: Արդյոք, տոմարական այս ավանդապաշտությունը սաղոմ նք չէր խորհրդային ուժերի կողմից Հայ եկեղեցու միասնականությունը խախտելու նպատակով: Այսօր թերևս կարելի է և մեծ ենթադրություն անել: Իսկ այն օրերին եկեղեցական շահի պահանջում էր ընկրկել. ռուսահայ ու վիրահայ համայնքներին արտոնվում է գործածել նաև հին տոմարը: Ինչ վերաբերում է Երուսաղեմի պատրիարքությանը, ապա այստեղ մեծ հարց, կարծես, այդպես էլ չի քննարկվել: Տերունական սրբավայրերի նկատմամբ հույն եկեղեցու հետ ունեցած ընդհանուր իրավասությունների պարագայում Հայոց Պատրիարքությանը առավել նպատակահարմար էր հին տոմարի գործածությունը՝ հատկապես Սբ Հարության տոնակատարության ժամանակ: Տոմարական այս բազմազանությանը Հայ եկեղեցին այսօր համակերպվել է՝ որտեղ առաջնային է դարձել հարեւանների հետ եկեղեցական տոները կատարելու, երկրում տիրող տոնական տրամադրությանը համահունչ լինելու հոգեբանությունը: Եվ այսօր Հայ եկեղեցում հաշտ ու խաղաղ գոյակցում են հին ու նոր տոմարները, որտեղից և հունվարի 6-ի և հունվարի 19-ի 13 օրերի տարբերությունը:

### Իսկ Ամանորը չի ուշանա

Սբ Ծննդյան այս պատմություններն իհարկե բոլորովին կապ չունեն աշխարհիկ Ամանորի հետ: Անկասկած այն Հայաստան կզա ճիշտ դեկտեմբերի 31-ի գիշերը՝ ինչպես ամենուր: Ամանորը ուրախ տրամադրությամբ են դիմավորում նաև Մայր Աթոռ Սբ Էջմիածնում: Ավանդաբար այս օրը տոնական հանդիսություն է տեղի ունենում Պատրիարքի Հոգևոր ճեմարանում, որին մասնակցում են Ամենայն Հայոց Հայրապետը, Մայր Աթոռի միաբանները, ճեմարանի սաներն ու դասախոսական կազմը: Գերիշխում է կատակի մթնոլորտը, երբ ուսանողները ներկայացնում են հայտնի «Կաղանդչեքերը»: Դրանք ուրախ և զվարճալի մանրապատումներ են հոգևոր հայրերի, հենց իրենց ու դասախոսների մասին: Իսկ կես գիշերից առաջ Վեհափառ Հայրապետը թափոքով ուղղվում է տաճար: Ուղիղ կեսգիշերին դղահանում են Մայր Աթոռ Սբ Էջմիածնի զանգերը: Կատարվում է գոհաբանական աղոթք, և ապա լսվում են շնորհավորանքներ: Նոր տարվա առաջին օրը՝ հունվարի 1-ին մատուցվում է Սբ Պատարագ, որի ընթացքում կատարվում է Հայրապետական մաղթանք Աթոռի անասանության համար: Իսկ մեզ՝ աշխարհականներիս, ամանորյա ճոխ սեղանների շուրջ մնում է հիշել, որ դեռ սպասում ենք Աստվածահայտնությանը: Առավել ևս, որ Սբ Ծննդին նախորդելու է Ծննդյան մեկշաբաթյա պահքը (ժուժկաության բացառիկ մի փորձություն):

Հեղինակ՝ ՍԿՐՏՅԱՆ

# 2006 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՐՄԻՐ ՀՐԵՂԵՆ ՇԱՆ ՏԱՐԻ Է

Արևելյան լուսնային օրացույցի համաձայն, հերթական Նոր տարին սկսվում է հունվարի 22-ին, սակայն չինացիները հանգիստ են վերաբերվում այն բանին, որ արևային օրացույցով ապրող աշխարհը Յրեղեն շան տարին դիմավորելու է հունվարի 1-ին:

Լուսնային օրացույցը բաժանված է տասներկու 5-ամյա փուլի, որտեղ 12 կենդանիներից յուրաքանչյուրին համապատասխանում են 5 նախատարրերը՝ փայտ, կրակ, հող, մետաղ և ջուր:

Բացի կենդանուց ու նախատարրից, ամեն տարի ունի իր գույնը: Կապույտին հաջորդում են կարմիրը, դեղինը, սպիտակն ու սևը: 12-ամյա փուլն ավարտում են Կարմիր Յրեղեն Շան և Կարմիր Յրեղեն խոզի տարիները:

## Շան տարիներն ըստ տարեքնների

- 10 փետրվարի, 1910 – 29 հունվարի, 1911՝ Սետաղե Շուն:
- 28 հունվարի, 1922 – 15 փետրվարի, 1923՝ Ջրային Շուն:
- 14 փետրվարի, 1934 – 3 փետրվարի, 1935՝ Փայտե Շուն:
- 2 փետրվարի, 1946 – 21 հունվարի, 1947՝ Յրեղեն Շուն:
- 18 փետրվարի 1958 – 7 փետրվարի՝ 1959՝ Հողե Շուն:
- 6 փետրվարի 1970 – 26 հունվարի՝ 1971՝ Սետաղե Շուն:
- 25 հունվարի, 1982 – 12 փետրվարի, 1983՝ Ջրային Շուն:
- 10 փետրվարի, 1994 – 30 հունվարի, 1995՝ Փայտե Շուն:
- 22 հունվարի, 2006 – 17 փետրվարի, 2007՝ Յրեղեն Շուն:



Թեև շունը ստանձնելու է իշխանությունը 2006 թ. հունվարի 22-ից, սակայն հենց Նոր տարվա կեսգիշերից մուտք է գործելու մեր կյանք՝ հավատարմությամբ, սիրով և ուրախությամբ զգացումով լցնելու բոլորիս սրտերը: Տարին դիմավորեք որքան հնարավոր է մտերմ խմբերով, բարեկամներով: Ուրախության և բերկրանքի մթնոլորտ ստեղծեք, խուսափեք տխուր մտքերից, վիրավորանք ու ցավ չպատճառեք միմյանց, որովհետև տարվա ընթացքում դա կարող է պատժել հրահրողներին:

Ի՞նչ է սպասվում 2006-ին: Աստղագուշակության պատմությունից հայտնի է, որ շան տարում հաճախ տեղի են ունենում անսպասելի ազատակամացում, իդեալիստական գաղափարների քարոզչություն և իրականացում: Ակտիվ տարի է, որն էլ հնարավորություն կտա հասարակության լայն զանգվածներին հասնելու նյութական բարեկեցության: Կրակագույն շան էներգիան կներգործի նաև մարդկանց բնավորության վրա ու կառաջնորդի թաքնված տաղանդով շատերին, կդարձնի ավելի եռանդուն, ընդունակ ռիսկի դիմելու, ուլքեր հանուն բարձրագույն իդեալների, արմատական փոփոխությունների պատրաստ կլինեն գոհելու ամեն ինչ, նույնիսկ սեփական բարեկեցությունը: Այս տարվա իրադարձությունները կնպաստեն տարբեր ստեղծագործական ընդունակություններ ունեցող մարդկանց դրսևորմանն ամենատարբեր ոլորտներում: Շատ մարդիկ «կբորբոքվեն» կրակի տարերքից, ուստի չեն բացառվում զանգվածային հասարակական ելույթները, հասարակության և իշխանության կոնֆլիկտները: Գործընկերային հարաբերությունների արդյունավետությանը կնպաստի թիմային աշխատանքը: Տարվա առաջին կեսին քաղաքական գործիչների սկզբունքների բախում տեղի կունենա, որը զգալիորեն կհասնի սեպտեմբեր ամսին: Տարվա մյուս կեսը կլինի համեմատաբար հանգիստ և կառուցողական: Շան տարին բարենպաստ է ամուսնանալու, երեխա ունենալու, նոր գործնական և սիրային հարաբերություններ հաստատելու համար: Երեխաները, որ լույս աշխարհ կգան այս տարի, կլինեն վառ և յուրօրինակ անհատականություններ:

### Ի՞նչ է սպասում 2006-ին 12 կենդանակերպերի ներկայացուցիչներին:

**Առնետ-** Բարենպաստ կլինի, եթե նրանք հետաքրքրվեն մասնագիտական աճով և ժամանակ հատկացնեն կարիերային: Նրանք պետք է խուսափեն գայթակղություններից, որպեսզի փորձության չենթարկվեն:

**Ցուլ-** Տարվա առաջին կեսին որքան էլ հոռետեսական տրամադրությունը համակի շատ ցուլերի, միևնույն է, դա պատրանք է: Տարվա երկրորդ կեսին նրանք լուրջ հաջողություն կհասնեն, որին կնպաստի նրանց կենսական փորձը և ինտուիցիան: Գործնական վերելքի հասնելու լավագույն ժամանակաշրջան է այն ցուլերի համար, որոնք ծնվել են կշեռքի, ջրիսի նշանների ներքո:

**Կապիկ-** Խոստումնալից տարի է նրանց կյանքում անսպասելիորեն կհայտնվեն մարդիկ, ուլքեր կցանկանան համագործակցել և աջակցել նրանց: Տարին բարենպաստ կլինի ընտանիք կազմելու համար:

**2006թ. վստահեք ձեր ներքին ծայրին և վարվեք ձեր խղճի թելադրանքով: Այդ դեպքում հաջողության կհասնեք կյանքի բոլոր բնագավառներում: Խորհուրդ է տրվում ընձեռված հնարավորությունը ձեռքից բաց չթողնել: Ամբողջ տարվա ընթացքում առաջնորդվեք «Գործել համարձակ և առանց երկմտելու» սկզբունքով:**

## top ten

2005 թվականին ամբողջ աշխարհում տեղի են ունեցել բազմաթիվ կարեւորագույն իրադարձություններ: Կարծում ենք, որ 10 ամենակարևոր իրադարձությունները հետևյալներն են.

1. Հռոմի պապ Հովհաննես Պողոս 2-րդի մահը և Յոզեֆ Ռատցինգերի՝ Բենեդիկտոս 16-րդի ընտրությունը Հռոմի պապի պաշտոնում:
2. Նավթի միջազգային զենքի անմախաղեպ բարձրացումը: Օգոստոսի սկսված զինը հասել է 71 դոլարի:
3. Հուլիսի 7-ին Լոնդոնում ահաբեկիչները հարձակումներ են իրականացրել մետրոպոլիտենում և երթուղային ավտոբուսներից մեկում:
4. Կատրինա փոթորիկի հետևանքով ԱՄՆ-ում գոհվել է հազար երեք հարյուր մարդ: Տասնյակ հազարավոր մարդիկ մնացել են առանց կացարանի:
5. Իրաքում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունների հետևանքով գոհվել են հազարավոր մարդիկ, իսկ տարվա վերջում Իրաքում ընդունվել է Սահմանադրությունը և ընտրվել մշտական խորհրդարան:

6. Իրանի նախագահ է ընտրվել Մահմուդ Ահմեդինեժադը, որն աչքի է ընկել հակաիրալյան մի քանի հայտարարություններով:
7. Պակիստանում տեղի ունեցած հզոր երկրաշարժի հետևանքով զոհվել է մոտ 100 հազար մարդ:
8. Ֆրանսիան և Նիդեռլանդները «ոչ» են ասել Եվրասիանադրությանը:
9. Եվրամիությունը ԵՄ-ին անդամակցելու հարցով բանակցություններ է սկսել Թուրքիայի հետ:
10. Ֆրանսիայում մի քանի շաբաթ շարունակ մահմեդական երիտասարդներն այրել են հարյուրավոր ավտոմեքենաներ և իրդեիել գրասենյակներ, դպրոցներ, ինչպես նաև մի եկեղեցի:

# ԵՐԲ Է ԳԱԼՈՒ ԱՃԽԱՐՀԻ ՎԵՐՋԸ



Ժամանակ առ ժամանակ աստղագետները խուճապ են առաջացնում վերադառնալով աստերոիդից (աստղակերպից) մեր մոլորակի կործանման մասին խոսակցություններին: Ե՛րբ դա կարող է տեղի ունենալ: Ուրեմն այսպես. անցյալ տարվա հունիսին հայտնագործված Ապոֆիս աստերոիդի ապագա ուղեծրի վերջին հաշվարկները հուշում են, որ աշխարհի վերջը կարող է գալ 2036 թվականին: Անցյալ տարվա վերջին NASA-ի աստղագետները խոսում էին, որ 2029-ին աստերոիդը բավականաչափ կմոտենա մեզ, սակայն երկիրը կվանի նրան և կփոխի օբյեկտի ուղեծիրը: Սակայն ԲելՖասթի Թագավորական համալսարանի աստղագետ Ալան Ֆիցսինոնը հաշվարկել է, որ մեր մոլորակն ընդամենը կհետաձգի բախվելու պահը: Այդ դեպքում Ապոֆիսը կարող է տարածություն մեջ անցնել այն կետով, որին բանալու անցք են անվանում, և կվերադառնա 2036 թվականին: Գիտնականներն աստերոիդ-իրեչին հետևում են անցյալ տարվա հունիսից: Նրան չորս բալ են տալիս Տորինոյի սանդղակով, ըստ որի որոշվում է մերձերկրային օբյեկտի վտանգավորության չափը (տասը բալը ամիսափելի ընդհարում է): Մասնագետները պնդում են, որ 390 մետր տրամագիծ ունեցող Ապոֆիսի հետ բախումից հարյուր հազար անգամ ավելի շատ էներգիա կառաջանա, քան եղել է Հիրոսիմայում ատոմային պայթյունից: Այնուհետև կթակոխի «միջուկային ծեղր»: Քսան տարին կարծես թե մեծ ժամանակ է ընդհարմանը նախապատրաստվելու համար: Սակայն վերջերս տեղի ունեցած կոնֆերանսում Spaceguard Foundation-ի նախագահ Անդրեա Կարուզին հայտարարեց, որ «կառավարությունները պետք է որոշում ընդունեն հիմա, որպեսզի գիտնականներին ժամանակ տան հարվածը մեղմացնելու միջոցներ գտնելու համար»: Իսկ գիտնականները աստերոիդի վրա հարձակում գործելու տարբեր առաջարկներ ունեն: Եվրոպական տիեզերական գործակալությունը նախատեսում է երկու արբանյակ արձակել Ապոֆիսի ուղղությամբ: Նրանցից մեկը կբախվի աստերոիդին, իսկ երկրորդը կգրանցի վերջինիս ուղեծրի փոփոխությունը:

## Байки разных лет

### Все-таки мы очень разные

1976-й год. Лекция по философии в пединституте им. В. Брюсова. Преподаватель исторического материализма Лев Саакян обращается к студентам:

- Если человек бросает молодую жену с ребенком на руках, престарелого отца, ответственный пост (чем подставляет тысячи человек), раздаёт все нажитое семьей добро абы кому и сваливает, чтобы ничего не делать, то как мы назовем этого гада?

- Негодяем, в лучшем случае, - отвечают хором студенты.

- Правильно. А вот индусы назвали его Буддой... Все-таки мы очень разные, - заключил Л. Саакян.

### Громче нельзя

Суббота в компьютерной фирме - рабочий день. Телефонный звонок.

- Доброе утро!  
Женский голос, шепотом:  
- Алло!  
- Да, я вас слушаю.  
- Я вчера у вас компьютер покупала.  
- И?  
- Вот он сломался, вы можете починить?  
- Говорите громче, я вас плохо слышу.  
- Громче не могу, муж услышит - убьет.

### Объявление

На проспекте Комитаса, в фотоавтомате висит объявление: «Четыре позы за три минуты».

### Посчитала

Сидим в кафе, пьем кофе, разговариваем. Подходит время идти по домам. Говорим официантке:

- Девушка, посчитайте нас, пожалуйста. На что девушка, улыбнувшись, говорит:  
- Вас четверо.

### Еще раз про любовь

О любви сказано, написано и спето очень много. О своем отношении к любви промолчу.

Лучше расскажу советский анекдот. Чтобы затаячить людей на лекцию, повесили объявление: «Лекция «О способах любви». Набилась полный зал. Вышел лектор: «Есть много способов любви. Мужчины к мужчине, женщины к женщине, но это мерзко и говорить не стоит. Но есть настоящая любовь, о которой мы и поговорим, - любовь к партии».

### Откуда берутся артисты

Выступая в концертном зале НИИ «Мион» (г. Тбилиси), Владимир Винокур рассказал: «Я учился в Курске в средней школе N26. Потом старое здание снесли, а номер 26 отдали школе для умственно отсталых детей. Так вот, когда я приезжаю в родной город на гастроли и рассказываю, что окончил школу N26, в зале начинается повальный хохот. Все мгновенно понимают, откуда берутся артисты».

### На приеме

Доктор:  
- Ну-с, милочка, разделись? Теперь дайте я вас послушаю!  
- А что мне спеть?

### О чем трепещет дед

В Тбилиси 80-летний дядя Гоги сказал мне: «Вот на старости треплюсь внукам, что до 92-го года свободно ездил по Союзу без паспорта, таможи, снятия отпечатков пальцев и повального обыска».

### Милицейский юмор

- Алло, милиция? Муж пошел гулять с собакой и пропал!  
- Сообщите приметы.  
- Ну, муж среднего роста, глаза, кажется, карие... А собака породы эрдельтерьер, кобель, окрас пегий, рост в холке 63 см, хвост купирован, возраст - 8 месяцев, нижний левый клык сломан, на задней лапе небольшой шрам...

Лев ОГАНЕЗОВ.

## «Горцарар»

Издается с июля 1999г.

**АВТОР ПРОЕКТА-  
ВАГРАМ БЕКЧЯН**

Зам. гл. редактора -  
**Роза ГУЛЯН**  
Գլխ. խմբագրի տեղակալ՝  
**Ռոզա ՂՈՒԼՅԱՆ**

**ИЗДАТЕЛЬ**

Издательский Дом

**«ШАГАНЭ»**

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован  
в Министерстве Российской Федерации  
по делам печати, телерадиовещания  
и средств массовых коммуникаций  
**Регистрационный номер**

**ПН № 77-5015**

Авторские материалы

не рецензируются и не возвращаются.  
Переписку с читателями редакция  
не ведет. Мнение авторов может  
не совпадать с мнением редакции.

*Материалы со знаком **Գ** публикуются  
на правах рекламы.*

*Редакция не несет ответственности  
за содержание рекламных объявлений.*

**ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО**

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов»  
Формат А3, объём 4,5 п.л.  
тираж 1500 экз. Зак. № 1

*Территория распространения:  
Российская Федерация, страны СНГ,  
зарубежные страны.*

*В номере использованы материалы  
«АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР»,  
«ԿԱՅԿԱԿԱՆ ԶԱՄԱՆԱԿ», «ԻՐԱՎԱՆԿ»,  
«ՉԻ», «ՈՆՈՎԵ ՎՐԵՄՅԱ», «ՎՕՅՆԻ».*

**Цена свободная.**

**Адрес редакции:**

**248001, г. Калуга,  
ул. Суворова, 160.  
тел.: (4842)-56-59-29,**

**E-Mail: gortsarar@mail.ru  
E-Mail: gortsarar@kaluga.ru**

**факс: (4842) 565-929,**

**www.gortsarar.ru**



**E-Mail: bshahanev@kaluga.ru**